Ազգ
Azg
6 ՆՈՅԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 204 (4584)
ISSN: 1829-1651

# «Լավ է՝ վանքը քանդվի, քան նորոգեն թուրքերը»

**Խոսքը Կիպրոսի հյուսիսային թուրքական հատվածում գտնվող հունական Անդրեաս առաքյալի վանքի մասին է: Օրերս, ինչպես նոյեմբերի 2-ին նշել է թուրքական NTV-ն, Կիպրոսի թուրքական վակուֆների վարչությունը վանքի նորոգման համար պատրաստվել է մրցույթ հայտարարել, որին էլ հակազդեցությամբ արձագանքել է արքեպիսկոպոս Խրիսոստոմոսը: Նա ասել է. «Վանքը պատկանում է հույն ուղղափառ եկեղեցուն, հետեւաբար վերականգնելու իրավունքը պետք է մերը լինի: Լավ է՝ վանքը քանդվի, քան նորոգվի թուրքական վակուֆների վարչության կողմից»:**

**Արք. Խրիսոստոմոսը միաժամանակ նշել է, որ վանքի վերականգնումը համատեղ ջանքերով նախաձեռնել են ՄԱԿ-ն ու Կիպրոսում ԱՄՆ-ի դեսպանատունը, ուստի հույն ուղղափառ եկեղեցին չի կարող հաշվի նստել թուրքական վակուֆների վարչության հետ, այդ իսկ պատճառով էլ մերժել է վերջինի հանդիպման պահանջը:**

**Հ. Չ.**

# Ոսկու հանքերում՝ ճյանդրբազություններ

## *Վերահսկիչ պալատի բացահայտումները*

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Գեղարքունիքի մարզի Սոթքի եւ Կոտայքի մարզի Մեղրաձորի հանքավայրերի ընդերքօգտագործման տրամադրման օրինականության եւ ընդերքի օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքները երեկ լրագրողներին ներկայացրեց Հայաստանի Վերահսկիչ պալատի նախագահ **Իշխան Զաքարյանը**:


ՖՈՏՈԼՈՒՐ

Ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ Գեղարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաեւ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրերի շահագործման հանքային իրավունք կրող «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունն աշխատում է խոշոր վնասներով (ներկայացվեցին 2007-2009-ի վնասների վերաբերյալ ահարկու թվերը): Թիվ 368 եւ 369 լիցենզիոն պայմանագրերը, որոնցով աշխատում է ընկերությունը, կնքվել են ոլորտը կանոնակարգող օրենքների եւ այլ իրավական ակտերի պահանջների խախտմամբ, հանքավայրերի շահագործումն ու հանքարդյունահանումն իրականացվել է առանց ուժի մեջ մտած լիցենզիաների (սա ըստ էության ապօրինի գործունեություն է), բացի այդ՝ լիցենզառու ընկերությունը մի շարք պարտավորություններ չի իրականացրել, այդ թվում ամենակարեւորը՝ Սոթքի հանքավայրից տարեկան 600,000 տոննա հանքանյութ պետք է արդյունահաներ՝ 366,445 տ է արդյունահանվել 2007-2009 թվերին, Մեղրաձորի հանքավայրից՝ 120,000 տոննայի պարտավորության դեպքում երեք տարում 1,600 տոննա է արդյունահանվել: Ընկերության պարտքը կոնցեսիոն վճարի գծով պետբյուջեին կազմում է 15 մլն 320 հազ. դրամ՝ Սոթքի հանքավայրի համար, իսկ Մեղրաձորի հանքավայրի համար՝ 8 մլն 840 հազ. դրամ:

*Տես էջ 3*

**ՔՈՒՅԱՊՐԱԿԱՆ**

# Թուրքիայի «սեւ ցուցակի» յուրահատկությունները

**Վերջին օրերին բավականին ակտիվ քննարկվող մի նորություն առավելապես ակցիա է հիշեցնում, քան իրողության արտացոլում: Ընդ որում, սառեցված հայ-թուրքական գործընթացի ֆոնին հստակ է, որ Թուրքիան նման տեղեկություններ տարածելով առավելապես խնդիր է դրել բացելու կարծես թե բավականին ամուր փակված «հարաբերությունների նորմալացման» գործընթացը:**

**Խոսքը Թուրքիայի «կարմիր գրքի» կամ, ավելի պատկերավոր ասած, «սեւ ցուցակի» մասին է, որից իբր դուրս է հանվել Հայաստանը: Մինչդեռ չկա որեւէ հիշատակում, թե Հայաստանն ընդհանրապես եղել է Թուրքիայի համար վտանգ ներկայացնող երկրների շարքում՝ ամրագրված «կարմիր գրքում»:**

**Ամենից առաջ, այդ փաստաթուղթը մեծ գաղտնիություն ունի, չի հրապարակվում: Իսկ այդ փաստաթղթում փոփոխությունների մասին տեղեկությունները հիմնականում արտահոսքի տեսքով են եւ հասսատապես ունեն կոնկրետ նպատակ ու խնդիր: Հենց թուրքական մամուլի հրապարակած տեղեկություններով այն վերանայվում է հինգ տարին մեկ: Փաստաթղթի յուրաքանչյուր վերանայումից հետո մասնագետների համադրությունները պարզել են, որ Հայաստանի անունը երբեք չի նշվել որպես սպառնալիք կամ վտանգ:**

**Այն, որ Թուրքիան իր «սեւ ցուցակի» վերաբերյալ տեղեկության արտահոսք է իրականացրել Իսրայելը որպես վտանգ ներկայացնելու մասին բարձրաձայն եւ երկրի համար կարեւոր փաստաթղթի մակարդակով, հստակ է: Հստակ է նաեւ, որ Հայաստանի անունը շոշափվում է Թուրքիայի «պատրաստակամության» մասին խոսելու նպատակով, չնայած հայկական կողմի այն հայտարարություններին, որ որեւէ կերպ եւ ոչ մի քննարկում չի իրականացվում հայ-թուրքական համատեքստում:**

**Այս առնչությամբ նշենք, որ «սեւ ցուցակում» չեղած Հայաստանը «հանելու» հայտարարություններով Թուրքիան չի փոխում նախապայմաններ թելադրելու իր կեցվածքը, մինչդեռ Հայաստանը քանիցս հստակ նշել է, որ եթե Թուրքիան իրոք ցանկանում է բարիդրացիական հարաբերություններ հաստատել, ապա առաջին հերթին պետք է վավերացնի արձանագրությունները եւ սկսի երկրի ներսում Ցեղասպանության ճանաչման գործընթացը:**

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Մանվել Սարիբեկյանին ենթարկել են կտտանքների

Համաձայն Աստրախանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ ձեռք բերված համաձայնության, նոյեմբերի 4-ին ադրբեջանական կողմը հայկական կողմին է հանձնել 20-ամյա հովիվ Մանվել Սարիբեկյանի աճյունը, որը մահացել էր Բաքվի բանտում: Հայկական կողմը, Սարիբեկյանի դիակի դիմաց, ադրբեջանական կողմին հանձնել էր 2010-ին ՀՀ պետական սահմանը հատած ադրբեջանցի զինվորին: Հիշեցնենք, որ Գեղարքունիքի մարզի Թթուջուր գյուղի բնակիչ Մանվել Սարիբեկյանը գերեվարվել էր այս տարվա սեպտեմբերի 11-ին: Նախնական տվյալներով՝ նա մի քանի խոշոր եղջերավոր անասուններ տարել էր արոտավայր եւ ժամը 17-ի սահմաններում «Քեդուտե հանդամասում» մառախուղի հետեւանքով կորցնելով կողմնորոշումը՝ հայտնվել հայ-ադրբեջանական սահմանում եւ գերեվարվել ադրբեջանցիների կողմից:

Ադրբեջանական պաշտոնական հայտարարության համաձայն՝ Սարիբեկյանը մահացել էր հոկտեմբերի 5-ին՝ ինքնախեղդամահության հետեւանքով, սակայն Հայաստանում, դիակի նախնական զննությամբ պարզ է դարձել, որ այն պաշտաճ կերպով չի պահպանվել Ադրբեջանում, քանզի դիակը եղել է քայքայված:

Դիակի դատաբժշկական հետազոտությամբ պարզ է դարձել, որ դիակի վրա առկա են կտտանքների հետքեր, ինչը վկայում է, որ Սարիբեկյանը ենթարկվել է խոշտանգումների եւ անմարդկային վերաբերմունքի:

ՀՀ գլխավոր դատախազության մամուլի ծառայության փոխանցմամբ՝ Ադրբեջանի կողմից գերեվարված ՀՀ քաղաքացի Մանվել Սարիբեկյանի մահվան դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ առանձին դաժանությամբ դիտավորյալ սպանության հատկանիշներով: Աղվան Հովսեփյանի ցուցումով ոստիկանությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով (դիտավորյալ սպանություն՝ առանձին դաժանությամբ): Նախաքննությունը հանձնարարվել է ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությանը:

Երեկ ադրբեջանական 1news.az կայքէջը տարածել էր, թե այսօր Աղդամի տարածքում ժամը 16-ի սահմաններում հայկական եւ ադրբեջանական կողմերի միջեւ տեղի կունենա դիակների փոխանակում: Ադրբեջանական կայքը նշում էր, թե հայկական կողմը կփոխանցի Մուբարիզ Իբրահիմովին եւ Ֆարիդա Ահմեդովին եւ կստանա Գավրուշ Հարությունյանի դիակը: Սակայն ՀՀ ՊՆ մամուլի եւ հասարակայնության հետ կապերի բաժնից «**Ազգ**»-ին տեղեկացրին, որ սա ադրբեջանական կողմի հերթական ապատեղեկատվությունն է:

# Վրաց հակահետախուզական «համճարեղ» նախագիծը՝ «Էնվեր»

## *Ռուսական շփումները վտանգավոր են դառնում Վրաստանում ապրողների համար*

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Վրաստանի իրավապահ մարմինները ձերբակալել են 13 անձի՝ մեղադրելով նրանց Ռուսաստանի օգտին լրտեսություն կասարելու մեջ:**

**«Ազգը» դեռեւս նոյեմբերի 2-ի համարում տեղեկացրել էր, որ ձերբակալվածների թվում կան նաեւ ազգությամբ հայեր: Նախնական տեղեկատվության համաձայն, ձերբակալվածները մեղադրվում էին լրտեսական ցանց ստեղծելու փորձերում եւ «իրենց աղբյուրներից տեղեկություններ ստանալու եւ ռուսաստանյան համապատասխան գերատեսչություններ այդ տեղեկությունները հասցնելու մեջ»:**

**Նշենք, որ դեռեւս 2006-ին վրացական իշխանությունը հեղեղված էր լրտեսական պատմություններով, ձերբակալություններով ու Վրաստան-Ռուսաստան երկու երկրների փոխադարձ մեղադրանքներով: Այդպիսի ձերբակալությունների մասին վրացական իշխանությունների հայտարարությունները նախկինում հստակ ուղղվածություն ունեին՝ արդարացնել ռուսական ուղղությամբ ծրագրվող ռազմական գործողությունը կամ ամրապնդել «Ռուսաստանն ագրեսոր է» մոտեցումն աշխարհում:**

**Վրացական ընդդիմությունն, իր հերթին, այս ձերբակալությունները համարում է բեմականացում, հավաստիացնելով, թե դա արվում է ընդդիմության կողմից նոյեմբերին ծրագրված ակտիվության վրա ազդելու նպատակով:**

*Տես էջ 2*

# Իրաքում քրիստոնյաները ճամպրուկներն են կապում

Այդ մասին տեղեկացրել է թուրքական «Ռադիկալ» թերթը՝ նշելով, որ վերջերս երկրի քրիստոնեական եկեղեցիներից մեկում իրականացված ահաբեկչությունից հետո, որի ժամանակ ահաբեկիչները սպանել էին 52 պատանդի, թափ է ստացել քրիստոնյաների հեռացումն Իրաքից: Նկատի ունենալով այդ միջադեպը, ասորի քահանա Պիուս Կաշհան ասել է. «Այստեղ մենք այլեւս տեղ չունենք: Եկեղեցում աղոթքի պահին դաժանաբար սպանեցին անմեղ մարդկանց: Որոշ ուժեր ուզում են, որ գնանք, իսկ Իրաքի կառավարությունը նրանց դեմ միջոցներ ձեռք չի առնում: Բոլորն էլ հեռանալու են երկրից: Պարզապես սպասում են, որ ավարտվի ուսումնական տարին»:

Ի դեպ, նախքան Իրաքի դեմ ԱՄՆ-ի սանձազերծած պատերազմը երկրում բնակվում էր 800 հազար քրիստոնյա: Այդ ցուցանիշը 2003-ին ամերիկյան օկուպացիայի հետեւանքով կրճատվեց 500 հազարի: Երկրում 60 հազար ասորիներից մնացին ընդամենը 20 հազարը: Հարկ է սակայն նշել, որ քրիստոնյաների թվի կրճատումը սոսկ Իրաքով չի սահմանափակվում, այլ յուրահատուկ է նաեւ 356 մլն բնակչություն ունեցող Մերձավոր եւ Միջին Արեւելքին, որտեղ ներկայումս ընդամենը 20 մլն քրիստոնյա է մնացել:

Հ. Չ.


# ՀԻՇԵՑՈՒՄ

**Պարտադիր ապահովագրության պայմանագրեր ձեռք բերելու ժամկետի ավարտին մնացել է 55 օր:**

**«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»**
**ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:**

- **ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8**
- **ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38**
- **ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20 հասցեներով:**
- **www. ingoarmenia.am կայքում**
- **010-54-74-05 միասնական հեռախոսահամարով:**

Ինչպես նաեւ առաքում:

**«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»**
Վճարում ենք միշտ*

** Համաձայն ապահովագրության կանոնների եւ պայմանների:*

# Քլինթոնն ու ԱՄՆ-ը՝ կենտրոնացած ԼՂ խնդրի վրա, բլոգերների հարցում զգուշացումներով Ադրբեջանին

Միացյալ Նահանգների պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալ **Ֆիլիպ Գորդոնը** «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում, ի շարս այլ թեմաների, անդրադարձել է նաեւ կովկասյան հակամարտություններին, այդ թվում՝ ղարաբաղյան կարգավորմանը:



Հարցին, թե արդյոք Միացյալ Նահանգները եւ Ֆրանսիան հօգուտ Ռուսաստանի նվազեցնո՞ւմ են իրենց դերակատարությունը Մինսկի գործընթացում, քանի որ Ռուսաստանն է ստանձնել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցություններ կազմակերպելու եւ միջնորդելու առաջնորդի դերը, Գորդոնը արձագանքել է, թե այդպիսի իրավիճակի մասին տեղեկությունը նորություն կլիներ ինչպես ԱՄՆ պետքարտուղարի, այնպես էլ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկեի համար:

«Կարծում եմ, դա նորություն կլինի պետքարտուղարի համար, ով չափազանց կենտրոնացած է այդ խնդրի վրա եւ բավական ժամանակ է տրամադրել դրա լուծմանը՝ աշխատելով Ֆրանսիայի եւ Ռուսաստանի, ինչպես նաեւ (հակամարտող) կողմերի հետ եւ հուլիսին այցելելով այդ երկու երկրները (Հայաստան եւ Ադրբեջան)», ասել է Գորդոնը:

Նրա խոսքերով, դա նորություն կլինի Մինսկի խմբում ԱՄՆ բանագնաց դեսպան Ռոբերտ Բրադկեի համար, ով իր ֆրանսիացի եւ ռուսաստանցի գործընկերների հետ իսկայական ժամանակ է հատկացրել՝ այցելելով այդ երկրները: «Դա նորություն կլինի ինձ եւ այստեղ՝ պետական դեպարտամենտում ուրիշների համար, որովհետեւ Միացյալ Նահանգները՝ որպես Մինսկի խմբի համանախագահող երկիր, բայց նաեւ որպես Կովկասում կարեւոր խաղացող մեծ դեր է կատարում: Եվ մենք շատ կենտրոնացած ենք այդ խնդրի վրա, որովհետեւ դա վտանգավոր կացություն է», ասել է Գորդոնը:

«Շփման գծում շատ հաճախ են լինում միջադեպեր, մենք վճռական ենք Մինսկի գործընթացի միջոցով կարգավորում կայացնելու հարցում, որի բացակայությունը մշտապես մտահոգիչ վիճակ է ստեղծելու: Դա կհանգեցնի երկու երկրների մեկուսացմանը այն դեպքում, երբ նրանք պետք է տնտեսության եւ դիվանագիտության առումով համագործակցեն: Դա կստեղծի բախման հնարավորություն, ուստի մենք իսկապես շատ ենք զբաղվում այդ հարցով», ընդգծել է Միացյալ Նահանգների պետական քարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով տեղակալ Ֆիլիպ Գորդոնը:

Ադրբեջանում բլոգերների, նաեւ թերթի խմբագիր Էյնուլլա Ֆաթուլաեւի, խոսքի ազատության այլ խնդիրների անդրադարձող հարցին ի պատասխան Գորդոնը նշել է. «Երբ ԱՄՆ նախագահը ինչ-որ հանդիպմանը, ի շարս ռազմավարական հարցերի, ժամանակ է ծախսում ու ընդգծում, թե իրեն անձամբ որքան է կարեւորում մարդու իրավունքների նման հարցերը, դա շատ կարեւոր հաղորդագրություն է: Եվ այդպես արեց ԱՄՆ նախագահը նախագահ Ալիեւի հետ հանդիպմանը Նյու Յորքում, եւ մենք կարծում ենք, որ ադրբեջանցիները գիտեն, որ աշխարհը մեծ ուշադրություն է դարձնում այդ հարցերին, եւ նրանք պետք է լուծեն այդ հարցերը»:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

**Հ. Գ. Բաքվի վերաքննիչ դատարանը պետք է քններ կալանավորված լրագրող Էյնուլլա Ֆաթուլաեւի հայցն ընդդեմ Հարադարի շրջանի դատարանի, սակայն փոխարենը վերաքննիչը Ֆաթուլաեւի ձերբակալման որոշում է կայացրել: Ֆաթուլաեւն արդեն երրորդ տարին բանտարկված է: Դատարանը ընդունել է Ֆաթուլաեւին ձերբակալելու որոշում՝ չնշելով ժամկետը:**

## Ուշիլիտար քաղաքավարություն

**Ժամանակակից երիտասարդությունն ուրիշ է եւ բնավ նման չէ 70-80-ականների մեր սերնդին: Ուրիշ է հետաքրքրություններով, աշխարհընկալմամբ, ճաշակով, ուրիշ՝ նույնիսկ արտաքին երեւույթով: 70-80-ականների նիհար, ձիգ, մարզական կեցվածքով տղաներ հիմա ոչ միայն քիչ են հանդիպում, այլեւ վաղուց մեր աղջիկների սրտով չեն. վերջիններս առավելապես սիրում են գեր, փոր գցած ու ճաղատ (գլուխը սափրած) տղաների, որոնց միայն տեսքից կշտություն ու ինքնագոհություն է բուրում: Եվ հայ աղջիկներին կանացի բնազդն է գուցե հուշում՝ ծվարել, բույն դնել այդպիսիների ապահով թեւերի տակ:**

**Նոր ժամանակներում երիտասարդության ոչ միայն ճաշակն է փոխվել, փոխվել են նաեւ ըմբռնումները քաղաքավարության մասին: Վերջինս վաղուց տարբերակված է եւ օգտաշահության տարրեր ունի իր մեջ:**

**Հանրային տրանսպորտից, միկրոավտոբուսներից օգտվողներս ամեն օր ականատես ենք զարմանալի մի երեւույթի. հայ աղջիկները տրանսպորտում քաղաքավարի չեն ոչ մեկի նկատմամբ՝ ո՛չ ծեր կամ տարեց կնոջ, ո՛չ էլ, առավել եւս, տղամարդու: Լավագույն դեպքում նրանք կարող են, իբրեւ քաղաքավարության արտահայտություն, ծեր կնոջ ձեռքից վերցնել պայուսակը («տվեք՝ պահեմ»), սակայն տեղը չեն զիջի ոչ մի գնով: Տրանսպորտում գրեթե նույն վարվելակերպն ունեն հայ տղաները. նրանք նույնպես տեղը չեն զիջի ո՛չ տարեց կամ ծեր տղամարդուն, ո՛չ կնոջը: Փոխարենը, եւ սա շատ է հետաքրքրական, մեր տղաները չափազանց քաղաքավարի են երիտասարդ աղջիկների ու կանանց նկատմամբ: Անհայտ է՝ օգտաշահության այդ ի՛նչ բնազդ է խլրտում նրանց մեջ, սեռային ի՛նչ ակնկալիքներ են արթնանում նրանց մտապատկերներում, բայց փաստ է՝ հայ երիտասարդությունը նույնիսկ քաղաքավարությունն է դարձրել ուշիլիտար:**

**ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ**
**Վանաձոր**

## Մարդիկ խեղդվում են ծխից, սակայն արտանետումները նորմայի սահմանում են

«Ես ինքս զգում եմ կոկորդի պրոբլեմ, ես սպորտսմեն եմ, թեեւ առողջ, շնչառական ոչ մի պրոբլեմ չի եղել, բայց հիմա հազ է նկատվում... Չես կարողանում լիաթոք շնչել, անընդհատ կոկորդի ծակոցներ, անընդհատ կոկորդի վառոց, քերոց:... Անձրեւը որ գալիս է, ոնց որ ցեխոտ անձրեւ: Իսկ բուսականությունը անցած տարվա համեմատ շատ նվազել է»: Այսպիսի բողոքներ ստացավ «Էկոլուր»-ը մարդկանցից, ովքեր ապրում եւ աշխատում են Երեւանում գտնվող «Մաքուր երկաթ» ԲԲԸ-ի (Արցախի 75) եւ «Արմենիան տիտանիում փրոդաքտն» ՍՊԸ-ի (Արին Բերդ 3/21) մոտակայքում: Բողոքի հիմնական պատճառը գործարանների ծխնելույզներից բարձրացող ծուխն է:

«Մաքուր երկաթ» ԲԲԸ-ն արտադրում է ֆերոմոլիբդեն, մաքուր մետաղական մոլիբդեն, իսկ ծխագազերից կորզում ռենիում: «Արմենիան տիտանիում փրոդաքտն» ՍՊԸ-ն արտադրում է ֆեռոտիտան եւ այլ ֆեռոհամաձուլվածքներ:

Արտադրության ընթացքում մթնոլորտ են արտանետվում ծծմբային անհիդրիդ եւ ազոտի օքսիդ, որոնց ազդեցությունն առողջության եւ շրջակա միջավայրի վրա հայտնի է Ալավերդի քաղաքի իրավիճակից, որտեղ աշխատում է Ալավերդու պղնձամոլիբդենային կոմբինատը: Եթե Ալավերդիում կան ավտոմատ կայաններ, որոնք որոշում են ծծմբի երկօքսիդով եւ ազոտի օքսիդներով տեղանքի մթնոլորտի աղտոտվածությունը, ապա Երեւանում այդ վտանգավոր տարածքը չի վերահսկվում ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի վրա ազդեցության մոնիտորինգի պետական կենտրոնի կողմից, եւ ստիպված ենք լինում բավարարվել այն տվյալներով, որոնք ներկայացնում են հենց ընկերությունները: «Մաքուր երկաթ» ընկերության տվյալների համաձայն՝ ծծմբային անհիդրիդի արտանետումները 2009թ. կազմել են 301,1 տոննա տարեկան, իսկ թույլատրելի սահմանային նորման տարեկան 349 տոննա է: «Արմենիան տիտանիում փրոդաքտն» ՍՊԸ-ի տվյալների համաձայն՝ ազոտի օքսիդի արտանետումները 2009 թ. կազմել են 0,48 տոննա տարեկան, մինչդեռ թույլատրելի սահմանային նորման տարեկան եղել է 0,519 տոննա: 2010 թ. համար ընկերությունները տվյալներ չեն ներկայացրել այն պարզ պատճառով, որ դեռ տարին չի վերջացել: Եվ մարդիկ չգիտեն, թե ինչ են շնչում:

«Հայ կանայք հանուն առողջության եւ առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի փորձագետ **Լիլիկ Սիմոնյանը** «Էկոլուր»-ի հետ զրույցում ասաց, որ ծխի մեջ առկա վնասակար նյութերն ազդում են շնչառական ուղիների եւ աչքերի լորձաթաղանթների վրա: Լորձաթաղանթի միջոցով կարող են ներթափանցել արյան եւ ապա օրգանների մեջ՝ առաջացնելով տարբեր հիվանդություններ:

«Էկոլուր»-ը ՀՀ բնապահպանության եւ առողջապահության նախարարությունների ուշադրությունն է հրավիրում այս խնդրի վրա, պահանջում է ստուգումներ անցկացնել ընկերություններում՝ մարդկանց առողջությանը եւ շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերը կանխելու նպատակով եւ հրապարակել այս խնդրի վերաբերյալ պաշտոնական եզրակացությունը:

**«Էկոլուր»**



## Վրաց հակահետախուզական «համճարեղ» նախագիծը՝ «Էնվեր»

*1-ին էջից*

**Ի դեպ, լրտեսական գործունեության մեղադրանք նույն տրամաբանությամբ կարող է ներկայացվել նաեւ վրաց որոշ ընդդիմադիրների, որոնք Մոսկվայում կամ այլուր ռուսաստանյան ներկայացուցիչների հետ հանդիպումներ ու քննարկումներ են ունենում:**

**Ամեն դեպքում, վրացական իշխանությունների՝ ձերբակալությունների եւ դրանց հիմնավորումների մասին նախընտրած լռությունը, ինչպես եւ նախապես խոսացել էին, խախտեցին երեկ: Ըստ այդմ, ձերբակալված 13 անձանցից 9 Վրաստանի քաղաքացիներ են, 4-ը՝ Ռուսաստանի Դաշնության: Ձերբակալությունների ցուցադրական բնույթը (հեռուստատեսությամբ) խորացնում է կասկածը պատճառների լրջության վերաբերյալ:**

**Վրաստանի ներքին գործերի նախարարության հայտարարության համաձայն, ձերբակալվածներից 6-ը Վրաստանի զինված ուժերի օդաչուներ են: Նրանց շարքը շարունակում են մեկ նավաստի-ռադիոմասնագետ, հյուրանոցային տեխնիկական մեկ մենեջեր եւ «Գլոբալացման ինստիտուտ» հասարակական կազմակերպության մի հիմնադիր: Առաջին ձերբակալությունները տեղի են ունեցել դեռեւս այս տարվա հուլիսին:**

**«Ազգը» տեղեկացրել էր ձերբակալվածների թվում երկու հայերի մասին՝ Արմեն Գեւորգյանի եւ Ռուբեն Շիկոյանի, որոնք երկուսն էլ գործարարներ են, բաթումցի եւ, պարզվում է, նաեւ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի: Վերջին երկու ձերբակալվածները քոբուլեթցիներ են, որոնցից մեկն էլ՝ Յուրի Սկրիլնիկովը, իբր եղել է ռուսական ռազմական «հետախուզության հետ այդ խմբի կապավորը»:**

**Վրացական կողմի ներկայացմամբ, նշված անձինք իբր կապի մեջ են եղել Ռուսաստանի պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի գլխավոր հետախուզական վարչության հետ: Առավել բացառիկ է, որ այս միջադեպը հասարակությանը ներկայացվում է որպես դեռեւս 2006-ին տեղի ունեցած մեկ այլ լրտեսական սկանդալի հետեւանք, իբր այն ժամանակ հայտարարված՝ «մեղայականով ներկայանալու դեպքում քրեական պատասխանատվության չենթարկվելու» խոստմանը հետեւել է որոշ քաղաքացիների «մեղայականը»:**

**«Այս գործողությունը նշանակալիորեն պայմանավորված էր 2006-ին Վրաստանի իշխանությունների որոշմամբ, որի համաձայն անձինք, որոնք կամավոր կներկայանային եւ կխոստովանեին իրենց կապն արտասահմանյան հատուկ ծառայությունների հետ, կազատվեին քրեական պատասխանատվությունից», այսպիսի հայտարարություն է արել վրաց ներքին գործերի փոխնախարար Օրջոնիկիձեն: Նրա խոսքերով, դրանից հետո ՆԳՆ են ներկայացել «շատ մարդիկ, եւ նրանց տրամադրած տեղեկությունների հիման վրա էլ ծրագրվել է այս օպերացիան»:**

**ՆԳՆ-ի փոխնախարարի ներկայացմամբ, այս «լրտեսական բացահայտումը» վերջին մի քանի տարիների աշխատանքի արդյունք է, որն, ի դեպ, ծրագրված գործողությունների միայն մեկ փուլն է: Ընդ որում, ի սկզբանե այս «գործով, որ անվանված է «Էնվեր»», ձերբակալվել է 15 անձ, սակայն երկուսի հետ արարողակարգային գործարքներ են կնքվել:**

**Ռուսաստանի արտգործնախարար Սերգեյ Լավրովը լրտեսական այս պատմության հենց սկզբում էր հայտարարել, որ թեեւ ձերբակալությունները տեղի են ունեցել, սակայն ՌԴ արտգործնախարարությունը չունի մանրամասն տեղեկություն այդ ձերբակալությունների մասին: Որպես միակ տեղեկություն Լավրովը նշել էր ձերբակալվածների՝ Վրաստանի քաղաքացիներ լինելու հանգամանքը:**

**Ռուսաստանի Դաշնության արտաքին գերատեսչությունը երեկ հայտարարել է, որ Վրաստանի իշխանությունները տառապում են «խրոնիկ լրտեսամանիայով՝ հակառուսական հողի վրա»: «Վերջին մի քանի տարիներին վրացական ղեկավարությունը քանիցս նման սկանդալներ է սարքել», նշվում է ՌԴ ԱԳՆ-ի հայտարարության մեջ, հավելմամբ, որ այս սադրանքի ժամանակահատվածը պատահական չէ ընտրված. առջեւում ՆԱՏՕ-ի Լիսաբոնյան գագաթաժողովն է, նաեւ այլ միջազգային իրադարձություններ: Աստանայում կայանալիք ԵԱՀԿ-ի գագաթաժողովում էլ, ըստ Ռուսաստանի ԱԳՆ-ի, վրացական կողմը պատրաստվում է հերթական համառուսական հայտարարություններին: «Դժվար թե ակնհայտորեն կեղծ այս պատմությունը որեւէ արդյունք տա», եզրակացրել է Ռուսաստանի արտգործնախարարությունը:**

**Ձերբակալությունների հիմնական մասը կատարվել է Բաթումում, որտեղ ձերբակալվել է նաեւ Աջարիայի հայերի միության նախկին նախագահ Արմեն Գեւորգյանը: Ըստ «Ինտերպրեսնյուզ» կայքէջի, Վրաստանի «Ջավախք» շարժման անունից ոմն Ռուբեն Թորոսյան հայտարարել էր, թե Արմեն Գեւորգյանը եւ Ռուբեն Շիկոյանը եղել են շարժման մասնակիցներ, եւ նրանց ձերբակալությունը «հերթական ճնշումն է շարժման դեմ»: Նույն այդ ժամանակ «Ազգի» հրապարակած տարակուսանքը, թե Արմեն Գեւորգյանն ու Ռուբեն Շիկոյանը կապ չունեն «Ջավախք» շարժման հետ, անմիջապես հաստատվել էր շարժման ղեկավարների կողմից:**

**Այդպես էլ հստակ չէ, թե կոնկրետ ինչ մեղադրանք է ներկայացվել թեկուզ Ռուսաստանի քաղաքացի հանդիսացող բաթումցի հայերին: Միեւնույն ժամանակ, ինչ-որ անհասցե եւ անանուն հայտարարությունները մամուլում, թե Արմեն Գեւորգյանն ու Ռուբեն Շիկոյանը պետք է զգույշ լինեին իրենց կապերի ընտրության հարցում, հստակորեն վրացական իշխանությունների թելադրանքով արտահայտված կարծիք է այն պարզ պատճառով, որ Վրաստանում տարբեր ռուսական ընկերություններ են գործում, որոնց հետ համագործակցող անձինք բնավ էլ լրտեսությամբ չէ, որ զբաղվում են:**

## «Մերսեդեսում» հայտնաբերվեցին տղայի եւ աղջկա կիսամերկ դիակներ

**Նոյեմբերի 5-ի կեսօրին, Երեւանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան թիվ 133 շենքի հարեւանությամբ գտնվող ավտոտնակում ոստիկանության աշխատակիցները հայտնաբերել են «Մերսեդես» մակնիշի 11 SU 890 պետհամարանիշով ավտոմեքենա, որի մեջ եղել են 20-ամյա տղայի եւ 23-ամյա աղջկա կիսամերկ դիակներ: Ըստ նախնական վարկածի, նրանք խեղդվել են գազի արտահոսքից: Դիակները տեղափոխվել են դիահերձարան, կատարվում է դատաբժշկական փորձաքննություն: Մ. Մ.**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# ԼՂՀ ճանաչում. գլխո՞վ, թե՞ սրտով

Վերջին շրջանում կրկին արդիական է ԼՂՀ ճանաչման թեման: Ղարաբաղի անկախության ճանաչման նախաձեռնությամբ հանդես եկած «Ժառանգություն» խմբակցությունը հերթական անգամ բախվեց հակազդեցության. «ԼՂՀ ճանաչման ժամանակը դեռ չի հասունացել»: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման գաղափարն ինքնին ընդունելի համարող ընդդիմախոսները գտնում են, որ «տարաձայնությունները ոչ թե ռազմավարական, այլ մարտավարական հարցերում են»:

Ամենայն հավանականությամբ, նման երկմտանքի առիթը լիրիկական՝ «գլխով թե սրտով»-ն է: Համենայն դեպս, խորհրդարանական քննարկումների ժամանակ «Ժառանգության» հակառակորդները հնչեցրին հետեւյալ տեսակետը. «Ես չեմ կարծում, որ աշխարհում կգտնվի գեթ մեկ հայ, որ չի ցանկանա ԼՂՀ-ի անկախության ճանաչումը, բայց դա պետք է չլինի ինքնանպատակ եւ պետք է չվնասի կարեւոր գործին»: Երկրի քաղաքական իշխանությունը գտնում է, որ խնդրի կարգավորման հնարավորությունը ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի շրջանակում դեռեւս սպառված չէ: «Հենց համոզվենք, որ խնդրի լուծումն այդ ձեւաչափում անհնար է, ի սեր Աստծո, օրենքի նախագիծը շրջանառվում է, անմիջապես կառաջադրենք ու կդնենք ճանաչման հարցը»: Բայց ԼՂՀ ճանաչման նախաձեռնողները գտնում են, որ առանց այն էլ ՀՀ-ն ուշացել է այս հարցում. «Մենք ԼՂՀ-ն պետք է ճանաչեինք դեռ 1992-ին եւ հենց այս դահլիճում: Պետք է դա անեինք 1994-ին՝ գոնե հրադադարի հայտարարմանը զուգահեռ: Վերջին հաշվով՝ գոնե Կոսովոյի, Աբխազիայի ճանաչմանը զուգահեռ: ԼՂՀ-ն արժանի է ճանաչման եւ անհրաժեշտ է, որ Հայաստանն առաջինը դա անի»:

Հետաքրքրական փաստ է. ինչպես ադրբեջանցիները, այնպես էլ տարբեր մակարդակի միջազգային շատ փորձագետներ մեկ անգամ չէ, որ հայտարարել են. «Նույնիսկ Հայաստանը չի ճանաչել ԼՂՀ-ն»: Այստեղ, իհարկե, կա ճշմարտություն, բայց՝ մասնակի: Բոլորն են հասկանում՝ Հայաստանի կողմից Ղարաբաղի անկախության ճանաչումը ժամանակի հարց է: Հայաստանը դա դեռ չի արել՝ առաջնորդվելով այնուամենայնիվ «գլխով», ոչ թե «սրտով»... Այս հարցում «գլխով» առաջնորդվողների հիմնական փաստարկն այն է, որ «ճանաչումը կանխորոշում է բանակցությունների ելքը եւ խաչ է դնում դրանց վրա. ճանաչումից հետո քննարկման առարկա չի մնա»: Մինչդեռ «Ռեալպոլիտիկ» հաղորդաշարին տրված հարցազրույցում «այս պահին ճանաչման» նախաձեռնության հեղինակ **Րաֆֆի Հովհաննիսյանը** բերում է սեփական փաստարկը. «Իսկ մի՞թե Ադրբեջանը չի կանխորոշում բանակցությունների ելքը՝ ասելով, որ երբեք չի ճանաչի ԼՂՀ-ն՝ իբրեւ անկախ միավոր»: Նա գտնում է, որ Հայաստանի՝ ԼՂՀ անկախության ճանաչումը կհավասարակշռի կողմերի դիրքորոշումները՝ բանակցային գործընթացի արդյունքներն ամփոփելիս:

Այսպիսով՝ «գլխո՞վ», թե՞ «սրտով»:

Ճի՞շտ է արդյոք նման հարց առաջադրել՝ իմանալով, որ Հայաստանն արել է՝ ինչ կարող էր, որպեսզի Ղարաբաղը լինի ազատ եւ անկախ. ցուրտ ու մութ ժամանակներում, հետպատերազմյան զարգացման տարիներին՝ կիսելով Ղարաբաղի հետ կյանքն ու մահը, հացն ու ջուրը, դրոշի գույնն ու անձնագրի գույնը: Այն, ինչ բխում էր սրտից, արտացոլվեց «դե ֆակտո ճանաչման» մեջ: Մի՞թե միայն ՔԱԳԾ-ի փաստաթուղթը կարող է վկայել միավորված սրտերի սիրո մասին: Այդ ժամանակ առաջ է գալիս մյուս հարցը. իսկ «գլխո՞վ»:

Քաղաքական շատ գործիչներ այսօր ասում են, որ «Հայաստանը չի ճանաչում ԼՂՀ-ն, քանի որ դա ամենավերջին՝ պահուստային տարբերակն է, երբ մնացած բոլորը սպառված կլինեն...»: Հայաստանը, նրանց կարծիքով, ԼՂՀ-ի անկախությունը կարող է ճանաչել ամեն պահի. այժմ օրակարգային է այլ հարց՝ ինչպե՞ս համոզել մյուսներին դա անել: Եվ այդ հարցերի պատասխանը նրանք կոչ են անում գտնել, այնուամենայնիվ, ոչ «սրտով»...

ԼՂՀ-ի առաջին արտգործնախարար **Արկադի Ղուկասյանը** մի առիթով ասաց. «Շատ կցանկանայի, որ Ղարաբաղի անկախությունն առաջինը ճանաչեր Ադրբեջանը»: Այո՛, դա կլիներ իդեալական լուծում: Բայց, ինչպես հայտնի է, կովկասյան տաքարյունությանը հատուկ չեն կոնֆլիկտների իդեալական լուծումները: Եվ այստեղ, այնուամենայնիվ, գերակա է զգացմունքը, ոչ թե տրամաբանությունը...

Այս դեպքում, եթե վերադառնանք հոդվածի սկիզբը. նպատակահարմա՞ր է արդյոք հենց հիմա ճանաչել Լեռնային Ղարաբաղի անկախությունը, ինչո՞վ է ճիշտ առաջնորդվել այսօր այս հարցում: Ասում են՝ քաղաքականության մեջ սրտի համար տեղ չկա. այնտեղ իշխում են միայն բանականությունն ու սառը դատողությունը... Նաեւ ասում են, երբ խելքն ու սիրտը մենամարտում են, պետք է լսել հոգուն: Իսկ հոգին այստեղ, այնուամենայնիվ, Ղարաբաղն է...

ԿԱՐԻՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑ

# Հայրենադարձության մասին օրենքը պատրաստ

*Կայացավ ՀՀ սփյուռքի նախարարին կից ատյանի 10-րդ նիստը*

Ատյանի նիստի օրակարգում ընդգրկված էր երեք հարց: Ներկայացնում ենք առաջինը, որը ներկայացրեց փոխնախարար **Ստեփան Պետրոսյանը**: Ներկայացնելով «Սփյուռք» տարեգրքի անդրանիկ տպագրությունը (2009) նա նշեց, որ այն սկսվել է առաքվել սփյուռքյան բոլոր համայնքներին, երկլեզու: Երկրորդ տարեգիրքը կտպագրվի 4000 օրինակով եւ ավելի ընդգրկուն կլինի՝ ողջ տարվա ընթացքում իրականացվող ծրագրերով: Նախարար **Հրանուշ Հակոբյանը** ներկայացրեց նորատիպ տարեգիրքը ու կարեւորեց նման հավաքական աշխատանքը:




Օրակարգի երկրորդ հարցը, որը ներկայացրեց Հայրենադարձության եւ հետազոտությունների վարչության պետ Արմեն Եղիազարյանը, վերաբերում էր «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագծին, որում ընդգրկված են հայրենադարձության ողջ շթանը, իրավական բոլոր ակտերով ու օրենքներով: Հարցը լայն քննարկման դրվեց, առաջարկություններ եւ նկատառումներ եղան, նաեւ մտահոգություն՝ որ այս օրենքը չխթանի մասսայական հայրենադարձությանը սփյուռքից: Նախարարը մանրամասն բացատրություններ տվեց մտահոգություններին:

Մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչության հաշվետվությունը ներկայացրեց Թեւոս Ներսիսյանը: Նախարարը շնորհակալություն հայտնեց սփյուռքյան այն լրատվամիջոցներին, որոնք պարբերաբար անդրադառնում են նախարարության գործառույթներին ու նշեց հայաստանյան մամուլից «Ազգը», «Արմենիա», «Հ1» հեռուստաընկերություններին ու երկու դիտողություն արեց «Հայերն այսօր» կայքէջի թերությունների համար: Տեղեկացրեց, որ արդեն բանակցություններ են գնում ընդլայնելու կայքի էջերը, լրացնելով օտար լեզուներով:

Նիստի օրակարգում ավելացվեց «Արմենիա» առագաստանավի նավարկության մասին **Զորի Բալայանի** զեկույցը: Ներկայացնելով նախորդ նավարկությունը, որի ընթացքում նկարահանվել են հայկական եկեղեցիները բոլոր այն երկրներում, որտեղ «Արմենիա» առագաստանավը հասել է, պրն Բալայանը տեղեկացրեց, որ նավարկությունը ընդհատվել է արշավախմբի խոհարար Սամվել Սարգսյանի ծանր հիվանդության եւ մահվան պատճառով: Շուտով արշավախումբը ուղղություն կվերցնի Բուենոս Այրեսից դեպի հարավ, ընդհատված նավարկությունը ավարտին հասցնելու համար: Նախարարը շնորհակալություն հայտնեց պրն Բալայանին նման կարեւոր նավարկության ընթացքում հայկական բոլոր եկեղեցիների հաշվառման, գրանցման համար ու մաղթեց նրանց խաղաղ նավարկություն:

Ատյանի նիստը ավարտվեց «Հայ ինքնության որակների պահպանումը խառնամուսնություններում» գիտագործնական համաժողովի զեկույցների ժողովածուի եւ Ռուբեն Սեւակի 125-ամյակին նվիրված միջոցառումների շարքի ներկայացմամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ոսկու հանքերում՝ քյանդրբազություններ

*1-ին էջից*

Ընդհանուր հաշվով պետբյուջե ենթակա է վճարման 24 մլն 160 հազ. դրամ կոնցեսիոն վճար: Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածում (01.01.2008-01.04.2010) Սոթքի հանքից Արարատի կորզման ֆաբրիկա է ուղարկվել 648 հազար տոննա հանքաքար, որի մեջ ոսկու քանակը կազմել է 2031 կգ: Ֆաբրիկայում վերամշակվել է 656 հազար տոննա հանքաքար, որի կազմում եղել է 2026 կգ ոսկի, բայց կորզվել է 1214 կգ ոսկի. այսինքն՝ կորզումը կազմել է 59,89 տոկոս, ինչը 22,6 տոկոսով ցածր է նախագծով նախատեսված 82,5 տոկոս ցուցանիշից (458 կգ-ով պակաս՝ պետք է կորզվեր 1672 կգ): Պետեկամուտների կոմիտեի նախագահ Գագիկ Խաչատրյանից ՎՊ-ն ցանկացել է պարզել , թե «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությունը ինչպիսի՞ եկամուտներով է աշխատում. պարզվել է, որ 2007 թվականին ընկերության վնասը կազմել է 15 մլրդ 654 մլն դրամ վնաս, 2008 թվականին վնասն ավելացել է եւս 2 մլրդ-ով, կազմելով 17 մլրդ 270 մլն 237 հազար դրամ, 2009 թվականին՝ 11 մլրդ 605 հազար դրամ. «Նորից եմ կրկնում՝ խոսքը ոսկու մասին է», ասաց Ի. Զաքարյանը՝ ներկայացնելով միջազգային ոսկու շուկայում շարժն ու դինամիկան, որ «ոչ մեկը չասի՝ ոսկու գներն ընկել են, ոսկու գները նվազել են»: 2007-2010 թվականներին ոսկու 1 գրամի գինը 21,12 ԱՄՆ դոլարից դարձել է 40, 88 ԱՄՆ դոլար. «Այս պայմաններում խոսել մեր գիգանտ կառույցներից մեկի՝ Սոթքի ոսկու հանքի հետ կապված 15 մլրդ, 16 մլրդ կամ 17 մլրդ դրամների վնասով աշխատելուց, կամ խոսել վնասով աշխատող կառույցից, ինչը նշանակում է՝ պետական բյուջե ոչ մի հարկ չի մուծվել...», խոսքը կիսատ թողեց Ի. Զաքարյանը՝ դատողություններ անելը թողնելով լրագրողներին:

Ըստ օրենքի՝ լիազոր մարմինը, օրենսդրական եւ պայմանագրային մի շարք խախտումների ու թերությունների համար լիցենզառու «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությանը պետք է տար գրավոր զգուշացում՝ սահմանելով 90-օրյա ժամկետ նշված թերությունների վերացման համար: Դրա փոխարեն, առանց իրավական հիմնավորման՝ լիազոր մարմինը (էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարարությունը հավանաբար) «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությանը 2010 թվականի օգոստոսի 27-ի գրությամբ տեղեկացրել է, որ Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման նախագծում փոփոխություններ կատարելու համար սահմանել է նոր վերջնաժամկետ՝ մինչեւ 2012 թ. 4-րդ եռամսյակը:

Իր ուսումնասիրությունների եզրակացության հիման վրա Վերահսկիչ պալատը առաջարկություններ է ներկայացրել կառավարությանը՝ քննարկելու Սոթքի եւ Մեղրաձորի ոսկու հանքավայրերից հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ 368 եւ թիվ 369 լիցենզային պայմանագրերի վավեր լինելու հարցը, տվյալ հանքավայրերի շահագործման հանքային իրավունք կրող «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերության հանքային իրավունքների դադարեցման, տվյալ ՍՊԸ-ի՝ 2004-ի հուլիսի 1-ից 2008-ի փետրվարի 29-ը առանց ուժի մեջ մտած լիցենզիաների հանքավայրերը ոչ օրինական շահագործման եւ հանքարդյունահանման հարցերը, ինչպես նաեւ քննարկել շարունակական բնույթ կրող, օրենսդրական եւ պայմանագրային խախտումների չարձանագրման եւ դրանց կանխման (վերացման) նպատակով չիրականացման գործառույթների համար պատասխանատու համապատասխան պաշտոնատար անձանց՝ Հայաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հարցը:

«Մենք ընդամենը վերլուծել ենք պայմանագիրն ու նրա դրույթները, օրենքով ՎՊ-ին տրամադրված փաստաթղթերը, ֆինանսական ստուգում չենք արել, դա մեր իրավասություններից դուրս է, բայց վերցնել 250 մլն դոլար վարկ (Ի. Զաքարյանը մանրամասն ներկայացրել էր վարկ վերցնելու սխեման եւ կեղծ-օֆշորային միավորներին-Մ.Խ.) եւ ոչ մի լումա չներդնել Սոթքի կամ Մեղրաձորի հանքավայրերի շահագործման արդյունավետությունը բարելավելու համար, որպեսզի ` ոսկու հանքավայրում միլիարդների վնասով աշխատելու այս տխուր պատկերը չստանանք... սա մենք համարում ենք անընդունելի, եւ դրա համար մեր եզրակացությունը բավականին խիստ եւ կոշտ բնույթ ունի», եզրափակեց Ի. Զաքարյանը: Հավանաբար այս ուսումնասիրության արդյունքներով եւս կզբաղվի գլխավոր դատախազությունը:

Երեկվա ասուլիսի երկրորդ թեման վերաբերում էր ԿԳ համակարգում լիցենզավորմանը եւ ուսումնական հաստատություններում մասնագիտությունների պետական հավատարմագրման գործընթացի ուսումնասիրմանը. մի շարք մասնավոր եւ պետական բուհերի եւ միջին մասնագիտական հաստատությունների փաստաթղթային վերահսկողության արդյունքում ՎՊ-ն բազմաթիվ խախտումներ է հայտնաբերել այն 5 պայմանների առկայության ուղղությամբ, որոնք պարտադիր են ուսումնական գործընթաց կազմակերպելու համար, եւ անգամ առանց արտոնագրի, ասել է թե՝ ապօրինաբար գործող բուհ էր հայտնաբերել՝ Նիկոլ Գալանտերյանի անվան բեմարվեստի համալսարանը: Ուսումնասիրությունների արդյունքը Ի. Զաքարյանն ուղարկելու է ԿԳ նախարարություն, որտեղ նույն ոլորտներում ուսումնասիրություններ եւս արվել են, անգամ մասնավոր բուհերից արտոնագրերից զրկվողներ են եղել:

Հ. Գ. Ամեն անգամ ՎՊ-ի ուսումնասիրություններով բացահայտված խախտումների մասին իրազեկվելիս ինձ տանջում է այն հարցը, թե արդյոք հնարավոր չէ՞ր, որ պետության կառույցները, իրավասուները ժամանակին չթերանային, վերահսկեին խախտում եւ չարաշահում անող սուբյեկտներին, բյուջեն էլ, այդպիսով, տկլոր չէր մնա, ու ամեն անգամ ՎՊ-ն այսպիսի ցնցող բացահայտումներով չէր ներկայանա հասարակությանը: Այդպես չի լինում, իսկ հերթական ոլորտի կամ սուբյեկտի զեղծարարությունների ջրի երես դուրս բերելն էլ հասարակությունը միանշանակ չի ընդունում, հաճախ քաղաքական բանահյուսություն փնտրելով այսպիսի բացահայտումների տակ: Ամեն դեպքում Ի. Զաքարյանին հարցրինք, թե ովքե՞ր են իրականում հանքերի տերերը: Նա պատասխանեց հանրահայտը՝ ՎՊ-ի լիազորությունների եւ օրենքների մասին, ավելացնելով. «Ինձ մի տարեք սուբյեկտիվ դաշտ»:

# Վեցժամյա պիկետ՝ ՀԱԿ-ի գլխավորությամբ

Նոյեմբերի 9-ին «Երեւան» հյուրանոցում նախատեսվում է անցկացնել Հայաստան-ԵՄ մարդու իրավունքների վերաբերյալ երկխոսության ձեւաչափով սեմինար:

Այդ օրը ժամը 12-ից մինչեւ երեկոյան 18-ը Հայ ազգային կոնգրեսը հյուրանոցի դիմաց նախատեսում է անցկացնել վեցժամյա պիկետ: ՀԱԿ-ի համակարգող Լեւոն Զուրաբյանի մեկնաբանությամբ՝ պահը վճռորոշ է, «որովհետեւ ռեժիմի շուրջը օղակը սեղմվում է»:

Նրա ներկայացմամբ՝ սոցիալ-տնտեսական իրավիճակը երկրում կտրուկ վատթարացել է, կապիտալի մեծ արտահոսք է տեղի ունենում, բյուջեն չեն կարողանում հավաքել, որովհետեւ իշխանություններին չի հաջողվում վարկեր հայթայթել: Զուրաբյանի տեղեկությունների համաձայն՝ վերջերս իշխանություններին չի հաջողվել Ռուսաստանից վարկ ստանալ: ՀԱԿ-ի համակարգողը, վկայակոչելով իր աղբյուրներին, հայտարարեց, որ Ռուսաստանից փորձել են 1 մլրդ դոլարի վարկ ստանալ, սակայն չեն կարողացել: Այս ու էլի բազմաթիվ այլ խնդիրների վերաբերյալ ՀԱԿ-ը պատրաստվում է ելույթ ունենալ ու երկրում տիրող իրավիճակի գնահատականներ տալ:

Նա նոյեմբերի 9-ին կայանալիք պիկետը բնորոշեց՝ «միայն ծաղիկներ», կրկին խոստանալով, որ առաջիկա շաբաթներին ու ամիսներին ավելի լուրջ գործընթաց է սպասվում:

Հ. Հ.

# Իրանահայ համայնքը Հայաստանի հայելին է Թեհրանում

Թեհրանում հայկական թաղամասը երկու անվանում ունի: Պարսիկներն այն անվանում են Նարմաք, հայերը՝ Սասուն: Համայնքի բնակիչները փաստում են, որ անվան ընտրությունը խորհրդանշական է: Այդ կերպ փորձում են հսկայական Թեհրանում հայկական միջավայր ստեղծել՝ փորձելով մեղմացնել հայրենիքի կարոտախտը: Հայի շունչն ու բարեկամական մթնոլորտը Թեհրանում եւ հատկապես Սասուն թաղամասում ակնառու են:

Մայրաքաղաքում գործում է հայկական 7 եկեղեցի: Եկեղեցիներ ու մատուռներ են գործում Իրանի այլ քաղաքներում, Սպահանում գործում է նաեւ հայկական թանգարան, իսկ Արտազի Սուրբ Թադեի վանքը գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հուշարձանների պահպանման ցանկում:



ՌՈՒԲԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆ

Մուսուլմանական երկրում քրիստոնյա տարրի ներկայությունը իշխանությունների բացասական վերաբերմունքին երբեւէ չի արժանացել: Ընդհակառակը: Հայկական եկեղեցիներում կատարվում են ուխտագնացություններ, մատուցվում պատարագներ: Այդ կերպ Իրանը ներկայացնում է իր հանդուրժող կեցվածքը ազգային փոքրամասնությունների ու այլ կրոնների հանդեպ:

Հայկական միջավայրի պահպանմանը Թեհրանում նպաստում են միությունները: «Րաֆֆի», «Արարատ» եւ «Սիփան» միությունները հսկայական դեր են խաղում համայնքի զարգացման գործում եւ հայրենիքի հետ ամուր կապի գրավականն են: «Սիփան» միությունը Թեհրանի առաջին հայկական միությունն է եւ ունի 50 տարվա կենսագրություն: Միությունը հիմնականում զբաղված է համայնքի սկաուտական, մարզական եւ մշակութային կյանքով: 28 տարի գործում է ուսանողական միությունը, վերջերս բացվել է նաեւ կանանց միությունը: Հատկապես մշակութային ոլորտում համայնք-հայրենիք կապը դրված է բարձր մակարդակի վրա: «Սիփան» միության նախագահ **Հայկազ Շիրվանյանի** փոխանցմամբ՝ Հայաստանում կազմակերպվող փառատոներին իրանահայ երիտասարդները մշտապես մասնակցում են:

Այսօր Իրանում ապրում է 70.000 հայ, նրանց գերակշռող մասը բնակվում է մայրաքաղաքում եւ ունի մեծ արտոնություններ: Նրանք համայնքում պահպանում են իրենց ավանդույթներն ու ծեսերը:

Իրանահայերը հայտնի են եղել որպես հմուտ արհեստավորներ: Հեղափոխությունից հետո հայերի հիմնական զբաղմունքն արտադրությունն է: Թեհրանից շուրջ մեկ ժամ հեռավորության վրա տեղակայված մի շարք քաղաքներում գործում են հայերի հիմնած բազմաթիվ գործարաններն ու ֆաբրիկաները:

Երկրի վաստակավոր ուսուցիչների, բժիշկների, մտավորականների շարքերում հաճախ կարելի է հանդիպել «յան»-ով վերջացող ազգանվան:

Թեհրանի հայոց թեմի պատգամավորական ժողովի անդամ, Իրան-Հայաստան բարեկամության միության վարչության անդամ **Ռուբեն Սարդարյանը** փաստում է, որ Իրանի վերաբերմունքը հայերի նկատմամբ միշտ դրական է եղել: Այդ վերաբերմունքը բացատրվում է այն փաստով, որ իրանահայերը նվիրված քաղաքացիներ են եւ իրենց լավ աշխատանքով նպաստում են պետության կայացմանը: «Հայ համայնքի եւ Իրանի իշխանությունների միջեւ լավ հարաբերությունները նպաստել են նաեւ Իրան-Հայաստան հարաբերությունների զարգացմանը, որովհետեւ հաճախ Իրանում իրանահայերի օրինակն ունենալով՝ շատ լավ են վերաբերվում Հայաստանին եւ հայերին: Իրանի իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ արտաքին քաղաքականությունը Հայաստանի հետ որեւէ պարագայում փոփոխության չի ենթարկվի եւ կշարունակի ընթանալ փոխգործակցության մթնոլորտում: Երկու երկրների հարաբերություններում պետք է գնահատել ոչ թե հայտարարությունները, այլ գործնական շփումներն ու արդյունքները, որոնք ակնհայտ հայտարարում են՝ Իրանն ու Հայաստանը կանգնած են կողք կողքի», ասում է Ռուբեն Սարդարյանը:

Իրանահայ համայնքը Սփյուռքում այն եզակիներից է, որտեղ խառնամուսնություններ չկան: Համայնքի գլխավոր խնդիրը արտագաղթն է: Իրանահայերի արտագաղթով հիմնականում զբաղվում է հրեական կազմակերպությունը՝ «Հայազը», որ առաջարկում է բարեկեցիկ կյանք ԱՄՆ-ում: Կազմակերպության կենտրոնը գտնվում է ԱՄՆ-ում: Իրանում բնակվող փոքրամասնությունները 3000 դոլարով «Հայազ»-ում անդամագրվելուց հետո մեկնում են Ավստրիա, հետ ստանում վճարած գումարն ու դյուրին պայմաններով մեկնում են ԱՄՆ: Այս կազմակերպության նպատակը հակաիրանական քաղաքականություն ծավալելն է:

Երեք տարի առաջ ստեղծված Իրան-Հայաստան բարեկամության ընկերությունը, որի անդամ է Ռուբեն Սարդարյանը, ուշադրություն է դարձնում երկու երկրների միջեւ տնտեսական, մշակութային, մարզական, գիտական եւ հասարակական հարաբերություններին: Միության նպատակն է հարաբերություններ հաստատել հասարակությունների միջեւ: Հիմնական աշխատանքն ուղղված է ճանաչողական այցերին:



ՀԱՅԿԱԶ ՇԻՐՎԱՆՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թեհրան-Երեւան

Հ. Գ. - Իրանցիների լավ վերաբերմունքը հայերի հանդեպ բազմաթիվ անգամ զգացինք Թեհրանում: Երբ արդեն լքում էինք Թեհրանը, ես եւ ընկերուհիս որոշեցինք շրջել «Լալեհ» հյուրանոցում գտնվող խանութներով: Խանութի վաճառողը մեր պատասխանին՝ հայ ենք, շատ ուրախացավ: «Հինգ անգամ այցելել եմ Հայաստան, ունեմ բազմաթիվ հայ ընկերներ ու հայ ժողովրդին շատ եմ սիրում: Հայաստանում շատ լավ ժամանակ եմ անցկացրել, հիացել եմ հայ ժողովրդի հյուրասիրությամբ, որպես շնորհակալության նշան ընդունեք ագաթե քարով այս զարդերը», ասաց նա:



# Նոր աշխատություն՝ խիստ կարեւոր ռազմապատմական ոլորտում

Պատմական գիտությունների դոկտոր Մուրադ Կարապետյանը հեղինակ է 6 մենագրության, ինչպես նաեւ 40 գիտական, բազմաթիվ հանրագիտարանային հոդվածների. «Հայաստանի Հանրապետության բանակը (1918-1920-ին)», «Հայկական կամավորական խմբերը եւ ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914-1917)», «Գեներալ-լեյտենանտ Հախվերդյան» ռուսերեն գիրքը, «Հայազգի զինվորականները ռուսական բանակում՝ 19-րդ դարի վերջ եւ 20-րդ դարի սկիզբ»: Կարապետյանը համահեղինակ է 2001-ին լույս տեսած «Հայրենիք եւ ծառայություն» գրքի: Այս տարի, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը Կարապետյանի հեղինակությամբ լույս է ընծայել «Ռուսական կայսրության բանակի հայ զորապետների, հայկական կազմավորումների եւ Հայաստանի Հանրապետության ռազմական պատմության աղբյուրագիտական ուրվագծեր» կարեւոր աշխատությունը: Գրքում ներկայացված են Ռուսական կայսրության բանակի 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայազգի զորապետների, հայկական կազմավորումների եւ ՀՀ ռազմական պատմության աղբյուրները: Հեղինակը մանրակրկիտ պարզաբանումներ է ներկայացնում, թե ո՞ւմ կողմից, որտե՞ղ եւ ե՞րբ են ստեղծվել այդ աղբյուրները եւ ի՞նչ բովանդակություն ունեն:




Հատկանշական է նկատել, որ մեզանում ռազմարվեստի պատմության ուսումնասիրմամբ համեմատաբար քիչ են զբաղվել: Մինչդեռ ավելորդ է անգամ նշելը այդ պատմական, մանրամասն ուսումնասիրությունների կարեւորությունը: Կարապետյանը իր առջեւ խնդիր է դրել ներկայացնելու 19-րդ դարի վերջի եւ 20-րդ դարի սկզբի հայոց զինվորականության պատմությանը վերաբերող ռազմապատմական աղբյուրների տեսությունը: Անշուշտ, երբ նաեւ անհրաժեշտաբար կուսումնասիրվեն հնագույն եւ հին ժամանակների հայ ռազմարվեստի պատմության աղբյուրները, այս աշխատության հավելմամբ հնարավոր կդառնա ամբողջովին վերարտադրել հայոց ռազմական պատմության շտեմարանը:

Գրքում հեղինակը նյութերը բաժանել է ըստ պետական պատկանելության ժամանակաշրջանների՝ Ռուսական կայսրության շրջան (1800-1917) եւ Հայաստանի Հանրապետության շրջան (1918-1920): Հստակ սահմանազատում այս երկու ժամանակաշրջանների միջեւ հնարավոր չէ, քանի որ հայկական զինված ուժերը ձեւավորվել են ռուսական բանակում գործած հայազգի, ինչպես նաեւ կովկասյան ճակատում կռված մի շարք այլազգի գործիչների ջանքերով եւ ռուսական բանակի կազմում ստեղծված հայկական ազգային կազմավորումների հիման վրա: Սակայն այդ սահմանազատումն անհրաժեշտ է՝ ռազմական տեսության հիմնարար սկզբունքների տեսանկյունից: Կարապետյանի գրքով ընթերցողն հնարավորություն ունի մանրամասն իրազեկվելու հայ ականավոր ռազմական գործիչների՝ Միքայել Լոռիս-Մելիքովի, նրա ղեկավարությամբ գործող տարբեր կազմավորումների, հայազգի մարշալների, գեներալներ Նազարբեկյանի, Սիլիկյանի, Բեկ-Փիրումյանի եւ շատ այլ արժանավորների գործունեությանը, ինչպես նաեւ փառապանծ Թամանյան դիվիզիայի՝ մինչեւ Բեռլին ճանապարհին: Գրքի երկու հիմնական բաժիններում էլ նյութերը հեղինակը բաշխել է ըստ տեսակի՝ արձանագրային եւ գրական:

Խիստ կարեւոր աշխատությանը, այդ թվում՝ 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարի սկզբին ռուսական բանակում ծառայած 100-ից ավելի հայազգի գեներալների եւ սպաների կյանքին եւ մարտական ուղուն ծանոթանալ հաստատապես արժե. Մուրադ Կարապետյանի «Ռուսական կայսրության բանակի հայ զորապետների, հայկական կազմավորումների եւ ՀՀ ռազմական պատմության ազբյուրագիտական ուրվագծեր» գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար:

Հ. Ա.

Հ. Գ. Նոյեմբերի 3-ին Մուրադ Կարապետյանին ՀՀ պաշտպանության նախարարը պարգեւատրեց «Անդրանիկ Օզանյան» շքանշանով:

# Փաստերը համառ են

«Հայտնի հանգամանքների բերումով մեր կառավարությունը հնարավորություն չի ունեցել լուրջ ուշադրություն դարձնելու մեր երկրամասին: Այժմ, ընկերներ, մենք ենթադրում ենք, որ ժամանակն է, որպեսզի մենք մեր կառավարությունից կարողանանք պահանջել մեր Ղարաբաղի հանդեպ, մեր այդ հարստությունների հանդեպ հատուկ ուշադրություն:

Առանց դրա, ընկերներ, հարստությունները չեն կարող օգտագործվել, եւ այդ երկրամասը տնտեսապես չի կարող վերածնվել, քանի որ կտրված է երկաթուղուց: Դեռեւս խաղաղ ժամանակներում, պատերազմից առաջ կառուցվում էր Շուշի- Եվլախ երկաթուղին: Ծախսվել էր բավականաչափ գումար, բայց իմպերիալիստական պատերազմը խանգարեց այդ բարի նախաձեռնությանը:

Այդ ճանապարհի վրա, որ մասամբ կառուցված էր, պետք է ասել, որ մինչեւ 33-րդ վերստը գնացքներ երթեւեկում էին, բայց ռելսերը քանդվեցին եւ ուղարկվեցին կովկասյան ռազմաճակատ: Ընկ. Մուսաբեկովը ելույթում կանգ չառավ, բայց համագումարի անդամների զեկուցումներում ասվում է, որ կառավարությունը կազմել է այդ երկաթուղու կառուցման նախագիծը եւ նախահաշիվը:

Մենք՝ ղարաբաղցիներս, կարծում ենք, որ հարկ կլինի այստեղ՝ համագումարում այդ հարցը նշել կառավարության զեկուցման վերաբերյալ մեր բանաձեւում, որպեսզի կառավարությունը եթե ոչ այս տարի, ապա եկող տարի ուշադրություն դարձնի Դաշտային եւ Լեռնային Ղարաբաղի 400 հազար բնակչության համար հույժ կարեւոր այդ հարցին եւ այդ հարցը մեռյալ կետից առաջ մղի», մեջբերված է **Արմենակ Կարակոզովի** ելույթից, որ նա ունեցել է Ադր. ԽՍՀ Խորհուրդների 4-րդ համագումարում 1925թ. մարտի 11-ին: Հարցը «մեռյալ կետից առաջ մղելու» համար Ադր. ԽՍՀ կառավարությանը հարկ եղավ «ուժերն ու միջոցները հավաքագրել» ամբողջ 53 տարի:

Կարակոզովը, թեկուզ երդվյալ բոլշեւիկ, բայց հայ էր: Եվ կարող էր «վարակված լինել նացիոնալիզմով»: Այդ իսկ պատճառով ուշադրություն դարձնենք, թե նույն համագումարում ինչ է խոսել ընկ. **Ռուստամովը.** «Ընկ. Բունիաթզադեն շատ քիչ կանգ առավ այն գավառների վրա, որ հող չունեն: Ես խոսում եմ Լեռնային Ղարաբաղի մասին: Ես կարծում եմ, որ Բաքու քաղաքի գործազուրկների 6-7 տոկոսը Լեռնային Ղարաբաղի այն գյուղացիներն են, որ չունենալով հող եւ չկարողանալով ընտանիք կերակրել, իրենք են գալիս այստեղ եւ մատնվում սովի:

Այս առումով ոչինչ չի արվել: Ես գիտեմ, որ ընկ. Բունիաթզադեն կասի, որ ձեզ տվել են ինքնավարություն, դուք ունեք հողժողկոմատ, որն էլ պիտի այդ մասին հոգա: Բայց ես կպատասխանեմ, որ առանց Կենտգործկոմի եւ կենտրոնական հողժողկոմատի օգնության մեր գյուղացիությունը չի կարողանալու վերականգնել իր քայքայված տնտեսությունը: Որպեսզի ազատվենք գործազրկությունից, որ կա Բաքվում եւ այլ քաղաքներում, որպեսզի գյուղացիությանը հնարավորություն տրվի վերականգնելու իր տնտեսությունը, պետք է նրան հող հատկացնել: Կենտգործկոմը եւ հողժողկոմատը բնակչությանը հող են հատկացրել, եւ երբ մենք նրանց ասում ենք՝ «վերցրեք այդ հողը», նրանք չեն ուզում, որ իրենց հարեւանների հետ տարաձայնություններ չունենան, քանի դեռ դա հաստատված չէ: Նրանք միմյանցից վախենում են եւ չեն ուզում, որ տարաձայնություն լինի:

Դեպքեր են լինում, երբ հողը պատկանում է երկու գյուղացու, եւ նրանցից ոչ մեկը դա չի օգտագործում: Պետք է այդ վեճերը վերացնել, որպեսզի մեր թշնամի մուսավաթականներին եւ դաշնակներին առիթ չտանք, թե խորհրդային իշխանությունը չի կարողանում կարգավորել մեզ համար այդքան կարեւոր հարցը: Համագումարը պետք է հանձնարարի նոր Կենտգործկոմին եւ հողժողկոմատին, որպեսզի նրանք լուծեն այդ հարցը, քանի որ այլեւս այդպես գոյություն ունենալ անհնար է:

Հարկավոր էր գյուղացիներին վարկավորել, որպեսզի նրանք կարողանային վերականգնել աղբյուրները: Ընկ. Բունիաթզադեն թիվ հայտնեց, թե ոռոգման համար ինչքան գումար է բաց թողնվել, բայց նա չասաց, թե որքան է հատկացվել Ղարաբաղին: Այնտեղ կա 12 լրիվ քայքայված գյուղ, նրանք ղարաբաղյան իշխանությանը խնդրում են առու անցկացնել, քանի որ առանց դրա չեն կարող այնտեղ ապրել: Նրանք հայտարարում են, որ եթե դուք դա չանեք, ապա մենք ստիպված կլինենք թողնել Ղարաբաղը: Այգեգործությունը լիովին ոչնչացվել է արյունալի կռիվների ժամանակ: Եթե մենք դրան ուշադրություն չդարձնենք, ապա մեկ տարի հետո քայքայված գյուղերում ոչ մի գյուղացի չի մնա»:

Ռուստամովը հարցը խտացրած է ներկայացնում: Բայց մուսավաթների եւ դաշնակների հիշատակումը վկայում է, որ խոսքը ԼՂ եւ հարակից շրջանների բնակչության միջեւ հողային խնդիրներին է վերաբերում: Այսինքն, փաստորեն բարձրացվում է ԼՂ գյուղացիության անմխիթար վիճակի հարցը: Ադր. ԽՍՀ գոյության բոլոր տարիներին եւ հողի, եւ ոռոգման ջրի, եւ գյուղտեխնիկայի հարցերը միշտ էլ մնացել են «օդից կախված»: Ավելի ճիշտ՝ չեն լուծվել:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Միջազգային

# Իրան-Վրաստան հարաբերությունները եւ Հայաստանը

## *Թեհրան-Թբիլիսի համագործակցությունից կարող է շահել Հայաստանը, եթե ճիշտ օգտագործի տարանցման իր դիրքը*

Նոյեմբերի 3-4-ը Վրաստանում էր Իրանի արտգործնախարար Մանուչեհր Մոթթաքին: Այս այցը եւ այցելության ընթացքում ստորագրված փաստաթղթերը կարեւոր են ոչ միայն վրաց-իրանական հարաբերությունների խորացման, այլեւ Հայաստանի տնտեսական զարգացման ու տարանցիկ պետություն դառնալու հնարավորության հարցում:

Ստորագրված ամենակարեւոր փաստաթուղթը երկու երկրների միջեւ այցագրերի (վիզաների) վերացումն է, որն ուժի մեջ կմտնի հավանաբար 2011-ին: Իրանի արտգործնախարարը այցելել է նաեւ Բաթում, որտեղ մասնակցել է իր երկրի հյուպատոսարանի պաշտոնական վերաբացման արարողությանը: 1918-1921 թթ. նախքան Խորհրդային Միության կողմից խաղաղ գրավումը, ինչպես Հայաստանը, Վրաստանը եւս եղել է անկախ պետություն: Նախագահ Միխեիլ Սաակաշվիլու հետ հանդիպումից հետո կողմերը կարեւորել են վրաց-իրանական համագործակցությունը առաջին հերթին զբոսաշրջության ոլորտում: Մոթթաքին ասել է, որ Իրանի եւ Վրաստանի սերտ համագործակցությունը կարող է միմյանց կապել Սեւ ծովն ու Պարսից ծոցը:

Վրաստանի արտգործնախարար Գրիգոլ Վաշաձեն ասել է, որ տնտեսական համագործակցության ոլորտում երկու երկրները մեծ թռիչք են կատարել: Տարեցտարի աճում է զբոսաշրջիկների թիվը, երկկողմ առեւտուրն աճել է ավելի քան 60 տոկոսով: «Սա դեռ սկիզբն է, անցագրային ազատ ռեժիմը ավելի կբարձրացնի այս ցուցանիշները», ասել է Վաշաձեն:

Ինչո՞ւ է Թեհրան-Թբիլիսի հարաբերությունների խորացումը կարեւոր Հայաստանի եւ ողջ տարածաշրջանի համար: Հայաստանը ցամաքային անմիջական սահմաններ ունի ե՛ւ Իրանի, ե՛ւ Վրաստանի հետ: Ավելին, անմիջական չորս հարեւաններից միայն Իրանն ու Վրաստանն են, որոնք, ի տարբերություն Թուրքիայի ու Ադրբեջանի, Հայաստանի հետ վարում են բարիդրացիական հարաբերություններ:

Խորհրդային Միության փլուզումից հետո Կովկասի, Կենտրոնական Ասիայի եւ Կասպյան ավազանի էներգակիրների համար գերտերությունների պայքար սկսվեց: Այդ պայքարը այսօր էլ ընթացքի մեջ է: Այն ընթանում է մի կողմից Միացյալ Նահանգների ու Եվրոպական միության, մյուս կողմից՝ Ռուսաստանի միջեւ, ճիշտ է՝ օր օրի ավելի է զգացվում Չինաստանի շունչը: Անշուշտ, Միացյալ Նահանգների ու Եվրոպական Միության օրակարգերը տարբերվում են, բայց երբ խոսվում է Ռուսաստանի ազդեցությունը սահմանափակելու մասին, Վաշինգտոնն ու Բրյուսելը միավորվում են ընդդեմ Մոսկվայի:

Միացյալ Նահանգներն ու Եվրոպան շահագրգռված են էներգակիրների ու հաղորդակցությունների արեւմուտք-արեւելք առանցքի զարգացումով, այդ նպատակի համար նրանք ներդնում են լուրջ ֆինանսներ: Անցնող տարիներին կառուցվեցին միջազգային նշանակություն ունեցող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթատարն ու Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը: Առաջիկա մեկ-երկու տարվա ընթացքում շահագործման կհանձնվի Կարս-Ախալքալաք երկաթգիծը, եւ միմյանց հետ երկաթուղագծով՝ Թբիլիսիի վրայով, իրար կկապվեն Բաքուն եւ Անկարան: Վերոնշյալ բոլոր նախագծերը շրջանցում են Հայաստանը՝ տնտեսապես ու քաղաքականապես ավելի մեկուսացնելով նրան, քանի որ խողովակաշարերն ու հաղորդակցությունները՝ Բաքվի ու Անկարայի պնդումով, շրջանցում են Հայաստանը:

Ռուսաստանը Արեւմուտքի ընդարձակման քաղաքականությանը փորձում էր հակադրել հյուսիս-հարավ միջանցքը, որը իրար էր միացնում Ռուսաստանը, Վրաստանը, Հայաստանը եւ Իրանը: Սակայն այս ծրագիրը չիրականացավ մի քանի, նաեւ հենց Ռուսաստանի պատճառով: Նախ, Մոսկվան Թբիլիսիի նկատմամբ (եւ հակառակը) վարում է ագրեսիվ, երբեմն՝ թշնամական քաղաքականություն: 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ հարաբերությունները խզվեցին, եւ փաստորեն, ի հավելումն թուրք-հայկական ու հայ-ադրբեջանական փակ սահմանների՝ բաժանարար գծերի, ավելացավ եւս մեկ փակ սահման՝ ռուս-վրացականը: Հայաստանին համարելով իր ռազմավարական դաշնակիցը, Ռուսաստանը երբեք էլ չի կարեւորել ո՛չ Վրաստան-Հայաստան երկկողմ եւ ո՛չ էլ Վրաստան-Հայաստան-Իրան եռակողմ համագործակցության խորացումը: Ավելին, Իրանի հետ կապվելու համար Ռուսաստանը նախընտրում է օգտագործել Ադրբեջանի տարածքը, քան Հայաստանը: Եվ ամենակարեւորը, հենց Ռուսաստանն էր, որ խոչընդոտեց արդեն կառուցված Իրան-Հայաստան գազատարը մինչեւ Վրաստան հասցնելու ծրագրին, համարելով, որ դա կարող է վնասել իր գազային շահերին:

Վրաստան-Հայաստան երկկողմ եւ Վրաստան-Հայաստան-Իրան եռակողմ համագործակցությանը թշնամաբար են վերաբերվում Թուրքիան ու Ադրբեջանը, քանի որ այդ համագործակցությունից Հայաստանը կարողանում է մի քիչ ավելի ազատ շնչել, իսկ Անկարայի եւ Բաքվի նպատակը Հայաստանին ծնկի բերելն է:

Իրականում, Վրաստան-Հայաստան-Իրան համագործակցության խորացումը կարող է եթե ոչ հակակշռել, ապա զուգահեռաբար գոյություն ունենալ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առանցքի կողքին: Լինելով երկու առանցքներում, Վրաստանը դրանից ոչ միայն չի տուժի, այլեւ նրա դերը ավելի կկարժեւորվի: Իսկ որպեսզի Հայաստանը կարողանա ցամաքային կապող օղակ լինել Իրանի ու Վրաստանի միջեւ, նախ պետք է ապահովվի տարանցման նվազագույն պայմանները: Այս իմաստով, Հայաստանի ու տարածաշրջանի համար չափազանց կարեւոր նշանակություն ունի հյուսիս-հարավ ավտոմոբիլային ճանապարհի շինարարությունը, որը սկսվելու է մոտ առաջիկայում: Վրաց-հայկական սահմանից մինչեւ հայ-իրանական սահման՝ ամբողջը Հայաստանի տարածքում, կառուցվելու է միջազգային չափանիշներին համապատասխանող ավտոմայրուղի:

Շատ է խոսվում Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման մասին: Մասնագետները պնդում են, որ այդ նախագծի կյանքի կոչվելու հավանականությունը խիստ կասկածելի է մի քանի պատճառներով: Նախ՝ կառուցումն է շատ թանկ՝ մինչեւ 4 միլիարդ դոլար, եւ պարզ չէ, թե կա՞ պետություն կամ միջազգային ֆինանսական կառույց, որ շահագրգռված է ներդրումներ կատարել: Երկրորդ՝ երկաթգիծը անցնում է լեռնային բարդ պայմաններով, երրորդ, եթե անգամ կառուցվի, ապա այդ երկաթգծի շահագործումը տնտեսապես շահավետ չի լինի, քանի որ Հայաստանի ու Իրանի միջեւ ապրանքաշրջանառությունը մեծ չէ: Անգամ եթե Հայաստանն իր ամբողջ առեւտուրը կատարի Իրանի վրայով, միեւնույնն է, այդ երկաթգծի շահագործումը շահավետ չի լինի: Իրան-Հայաստան երկաթուղագիծը կարող է շահութաբեր լինել միայն այն դեպքում, եթե դառնա տարանցիկ դեպի Վրաստան՝ միմյանց կապելով Պարսից ծոցն ու Սեւ ծովը:

Վերջին տարիներին բազմապատիկ թվերով ավելացել է իրանցի զբոսաշրջիկների թիվը Հայաստանում եւ Վրաստանում: Եթե նախկին տարիներին իրանցիները Հայաստան եւ Վրաստան էին այցելում հիմնականում իրանական Նոր տարվա՝ Նոուռուզի օրերին, ապա այսօր ամեն օր իրանցի զբոսաշրջիկների կարելի է հանդիպել Երեւանի ու Թբիլիսիի փողոցներում: Ե՛վ Հայաստանի, ե՛ւ Վրաստանի համար ավելի քան 70 միլիոնանոց Իրանը շատ գրավիչ ու հարուստ գործընկեր է թվում:

Սակայն Հայաստանը չպետք է ձեռքերը ծալած նստի: Իրանցի զբոսաշրջիկները Հայաստան եւ Վրաստան են այցելում գերազանցապես ցամաքային ճանապարհով՝ հայ-իրանական սահմանի Կարճեւան (Արաքսի վրայի կամրջով) սահմանանցով: Եթե զբոսաշրջության տեսանկյունից Հայաստանը չդառնա ավելի գրավիչ, ապա իրանցի տասնյակ հազարավոր զբոսաշրջիկներ Վրաստան մեկնելու համար ոչ միայն կարող են նախընտրել Թուրքիայի (Արեւմտյան Հայաստան) կամ Ադրբեջանի տարածքը, այլեւ կարող են հանգստի համար նախընտրել Վրաստանը Հայաստանի փոխարեն: Այսօր Վրաստանը զբոսաշրջիկի համար գնային տեսակետից շատ ավելի մատչելի է, քան Հայաստանը:

Նույնը վերաբերում է նաեւ տարանցիկ առեւտրին: Վրաց-իրանական առեւտուրը չի իրականացվի Հայաստանի տարածքով, եթե հայկական կողմի առաջարկած սակագները ավելի ցածր չլինեն, քան նույն բեռնափոխադրումը Թուրքիայի եւ Ադրբեջանի տարածքի վրայով իրականացնելու դեպքում:

**ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ**
**«Սիվիլիթաս» հիմնադրամի փորձագետ**

ՏԱՐԵՐԱՅԻՆ

# Ինդոնեզիայում հրաբխից 102 զոհ

**Ինդոնեզիայում վերջին օրերին Մերապի հրաբխի ժայթքումը հարյուրից ավելի մարդկանց մահվան պատճառ է դարձել: Ֆրանսպրեսի տվյալներով, նոյեմբերի լույս 5-ի գիշերը տեղի ունեցած հերթական ժայթքումից հետո զոհերի թիվը հասել է 102-ի:**

**Միայն երեկ գիշեր արձանագրվել է 58 զոհ. շատերը մոխրի շիկացած ամպի զոհերն են դարձել իրենց տներում: Փրկարարները լրագրողներին պատմել են, որ հրաբխի զոհերից ոմանք նույնիսկ չեն հասցրել արթնանալ: Ըստ որում, մարմինների մեծ մասը հայտնաբերվել է մերձակա Գենդոլ գետի ափին:**

**Ժայթքումից այրված որոշ գյուղերում փրկարարական աշխատանքները դեռ չեն սկսվել բարձր ջերմաստիճանի պատճառով: Մի շարք շրջաններում փրկարարներին օգնում են զինվորականները:**

**Մերապիի ժայթքումները սկսվեցին հոկտեմբերի 26-ին: Իշխանությունները հոկտեմբերի 25-ից սկսել էին բնակչության տարհանումը: Ներկայիս ժայթքումը համեմատում են 1930-ի աղետի հետ, երբ զոհվեց 1300 մարդ:**



# Ավիավթարներ Կուբայում եւ Պակիստանում

**Նոյեմբերի 5-ին, ընդամենը երկու ժամվա ընթացքում աշխարհում տեղի է ունեցել երկու ավիավթար, նախ Կուբայում, ապա Պակիստանում:**

**Կուբայում տեղական չվերթեր կատարող ATR 72-212 օդանավը ընկել եւ կործանվել է Սանտյագո դե Կուբա-Հավանա չվերթի ժամանակ: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ AeroCaribbean ավիաընկերության այդ օդանավը ընկել է Սանկտի-Սպիրիտուս նահանգում՝ կղզու կենտրոնական մասում: Բոլոր 61 ուղեւորները եւ անձնակազմի 7 անդամները զոհվել են: Ուղեւորներից 28-ը օտարերկրացիներ են՝ Արգենտինայի, Մեքսիկայի, Հոլանդիայի, Գերմանիայի, Ավստրիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Վենետուելայի, Իսպանիայի, Ճապոնիայի քաղաքացիներ:**

**Ընդամենը երկու ժամ անց ավիավթար է տեղի ունեցել Պակիստանում: Մասնավոր ավիաընկերություններից մեկի մարդատար օդանավը, որ վարձակալել էր իտալական Eni նավթային ընկերությունը, ընկել եւ ջախջախվել է Կարաչիի օդանավակայանից օդ բարձրանալուց քիչ անց: Օդանավը մասնագետներ եւ տեխնիկա էր տեղափոխում Սինդի նահանգի հեռավոր շրջաններ: Վերուլացքից հետո օդանավի անձնակազմը դիսպետչերներին հայտնել է անսարքության մասին եւ վթարային վայրէջքի թույլտվություն է խնդրել: Օդանավակայանին մոտենալիս օդանավը կտրուկ իջել է եւ գետնին զարնվելով բոցավառվել: Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ բոլոր ուղեւորները եւ անձնակազմի անդամները (ընդամենը 22 մարդ) զոհվել են:**

**Նախնական վարկածի համաձայն, աղետի պատճառը շարժիչների եւ ավիոնիկայի խափանումն է օդանավի անբավարար տեխնիկական վիճակի հետեւանքով: Սակայն տեղի իրավապահ մարմինները չեն բացառում նաեւ ահաբեկչության վարկածը:**

**Վերջին ամիսներին սա արդեն երկրորդ ավիավթարն է Պակիստանում: Օգոստոսին մայրաքաղաք Իսլամաբադի մոտակայքում օդանավի աղետից զոհվեց 160 մարդ: Այն ժամանակ Պակիստանի մասնավոր ավիաընկերություններից մեկի աերոբուսը բախվել էր լեռանը:**

# Նորվեգիան բողոքում է ԱՄՆ-ի լրտեսության կապակցությամբ

**Նորվեգիայի արտգործնախարարությունը ԱՄՆ իշխանություններից պարզաբանումներ է պահանջել, երբ պարզվել է, որ ամերիկացիները արդեն 10 տարի հետեւում են այդ սկանդինավյան երկրի որոշ քաղաքացիների: Որոշ տվյալների համաձայն, լրտեսումը սկսվել է 2000 թվականից եւ կանոնավոր բնույթ է կրել, որպեսզի կանխվեն հնարավոր ահաբեկչությունները Օսլոյում ԱՄՆ դեսպանատան դեմ: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը, վկայակոչելով նորվեգական NRK հեռուստառադիոկորպորացիայի տվյալները:**

**Տեղական TV 2 հեռուստաալիքի հաղորդման համաձայն, ամերիկացիները Նորվեգիայում 15-20 հոգանոց հատուկ խումբ են ստեղծել, որը կոչվում է Survellance Detection Unit (SDU): Նրանք Նորվեգիայի իշխանություններին չեն հայտնել իրենց գործակալների գործունեության մասին, որոնք տեղեկություններ էին ժողովում Նորվեգիայի հարյուրավոր քաղաքացիների վերաբերյալ: Ըստ որում, Օսլոյում գործունեություն ծավալած խմբի որոշ աշխատակիցներ անցյալում աշխատել են Նորվեգիայի իրավապահ մարմիններում:**

**Օսլոյում ԱՄՆ դեսպանատունում այդ մերկացուցիչ հարցերին տալիս են կարճ պատասխաններ եւ խոստանում են ավելի ուշ տալ ծավալուն մեկնաբանություն: Պետդեպարտամենտի ներկայացուցիչը վստահություն է հայտնել, որ լրտեսումը, դատելով ըստ ամենայնի, իրականացվել է տեղական իշխանությունների հավանությամբ: Սակայն գործողության սկզբից 10 տարի անց Նորվեգիայի ԱԳՆ-ում չգիտեին դրա գոյության մասին:**

# Մշակույթ եւ ...

## Հիշատակի միջոցառումներ՝ Ռուբեն Սեւակի 125-ամյակին

Արեւմտահայ մեծ բանաստեղծ Ռուբեն Սեւակի (Չիլինգիրյան) ծննդյան 125-ամյակի առիթով ստեղծվել է հոբելյանական հանձնաժողով՝ նախագահությամբ ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի: Հոբելյանական միջոցառումների շարքում արդեն տպագրվել է Ռուբեն Սեւակի ստեղծագործությունների գիրքը, ձայնագրվել է գրողի ստեղծագործությունների խտասկավառակը դերասանուհի Անահիտ Թոփչյանի ընթերցմամբ, ԵՊՀ -ում կբացվի Ռ. Սեւակի անվան լսարան, կթողարկվի նամականիշ: Մի շարք միջոցառումներ եւ ընթերցումներ կանցկացվեն ԵՊՀ-ում, դպրոցներում: Արդեն ձեռք է բերվել համաձայնություն Ռ. Սեւակի հարազատների հետ «Ռուբեն Սեւակ» կրթաթոշակ հաստատելու շուրջ: Հոբելյանական միջոցառումների մեկնարկը երեկ տրվեց Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում բացված գրողի ձեռագրերի, մասունքների, արխիվային նյութերի ցուցահանդեսով, որի ընթացքում դերասանուհի եւ գրող Անահիտ Թոփչյանի կողմից հնչում էին Ռուբեն Սեւակի ստեղծագործությունների հրաշալի կատարումները:




Ցուցահանդեսը բացեց եւ Ռուբեն Սեւակի հիշատակին ջերմ ու անմոռանալի խոսքեր ասաց թանգարանի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր **Հենրիկ Բախչինյանը**՝ անդրադառնալով Եղեռնի զոհը դարձած այն մտավորականներին, որոնց թողած ժառանգությունն այսօր հարստացնում է հայ գրականությունը, պոեզիան ու դարձել է ազգի ու պետության հարստությունը: «Նրանք թուրքի ձեռքով, թուրքի յաթաղանի զոհը դարձան, բայց մինչեւ այսօր էլ կատարում են իրենց բանաստեղծական սուրբ առաքելությունը»: Այսօր Ռուբեն Սեւակի ժառանգության մեծ մասը պահպանվում է Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում եւ գրողի եղբոր որդու՝ Հովհաննես Չիլինգիրյանի միջոցով մինչեւ օրս Նիցայում պահպանվում է գրողի հիշատակի տունը, որտեղ գտնվում են մեծ բանաստեղծի բազմաթիվ ձեռագրերը, նյութերն ու իրերը: Պրն Բախչինյանը **«Ազգի»** հետ զրույցում նշեց, որ Նիցայում գտնվող հիշատակի տունը շուտով կհանձնվի Հայաստանի եւ կհամալրի թանգարանի հավաքածուն:

«Ռուբեն Սեւակը մեկն է այն երրորդությունից՝ Դանիել Վարուժան, Սիամանթո, որոնք արեւմտահայ բանաստեղծությունը Պետրոս Դուրյանից ու Միսակ Մեծարենցից հետո կարողացավ Վարուժանի ու Սիամանթոյի հետ զարգացնել եւ հասցնել շատ ավելի բարձր համաշխարհային քերթության մակարդակի, որն ապահովում է նրա անմահությունը մեր քերթության աստղարեզում», այսպես բնորոշեց հոբելյարին պրն Բախչինյանը: Ռուբեն Սեւակի հիշատակին գեղեցիկ խոսքեր ասացին սփյուռքի փոխնախարար **Ստեփան Պետրոսյանը**, մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը**, Սեւակի հիշատակին գրված, պետական մրցանակի արժանացած «Եվ անգամ մահից հետո» գրքի հեղինակ, գրականագետ **Ալեքսանդր Թոփչյանը** եւ ուրիշներ:

Ցուցահանդեսի բացումից հետո թանգարանի Կոմիտասի անվան սրահում նորաստեղծ «Թանգարան գրական սալոն» ակումբը կազմակերպել էր դասական հեղինակի հոբելյանին նվիրված միջոցառում: Գիտական զեկույցով Ռուբեն Սեւակին ներկայացրեց բանախոս, բ. գ. թ., գրականագետ Սաթենիկ Ավետիսյանը, որից հետո ներկաները ունկնդրեցին գրական-երաժշտական թատերականացված կոմպոզիցիա, Ռ. Սեւակի ստեղծագործությունները ընթերցեց Անահիտ Թոփչյանը: Իսկ անվանի դերասանուհի Վարդուհի Վարդերեսյանն ընթերցեց Սիամանթոյի գործերից: Հուշ-երեկոն տպավորիչ էր ու հուզումնալից ավարտ ունեցավ, երբ հնչեց Ռ. Սեւակի «Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր» բանաստեղծությունը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## Գեղունի Չթչյանի հեղինակային համերգը Կամերային երաժշտության տանը

Երանելի է այն արվեստը, որում իշխում է պրոֆեսիոնալիզմը, որը ստեղծվում է ոգեշնչանքով, հիմնավորվում բարձրակարգ մասնագիտական գիտելիքներով ու հմտությամբ եւ որը գերում է գեղեցկությամբ. որը գնահատում են խստապահանջ քննադատներն ու գիտակները, բայց եւ ընկալում ու սիրում են հասարակության լայն խավերը: Առնչությունն այդպիսի արվեստի հետ բերում է ուրախություն, հոգեւոր անասելի բավականություն, հենց այդ արվեստն է, որ կարող է ծառայել որպես գեղագիտական եւ էթիկական արժեքների լավագույն դաստիարակ:

Այդպիսի ուրախության զգացում պարգեւեց ունկնդիրներին ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Կոմիտասի անվ. ԵՊԿ-ի պրոֆեսոր, ականավոր կոմպոզիտոր Գեղունի Հովհաննեսի Չթչյանի հեղինակային համերգը, որ օրերս տեղի ունեցավ Երեւանի Կոմիտասի անվ. Կամերային երաժշտության տանը:

Գ. Չթչյանն իր արժանի ու հաստատուն տեղն ունի հայկական կոմպոզիտորական դպրոցում, նրա երաժշտությունը ճանաչված է եւ սիրված թե՛ հայրենիքում, թե՛ նրա սահմաններից դուրս: Համերգի ծրագրում ընդգրկվել էին հատկապես վերջին տարիներին ստեղծված երկեր. դրանք ապացուցում են, որ բեղուն ճանապարհ անցած կոմպոզիտորը դեռ լի է ստեղծագործական մտքերով եւ շարունակում է կերտել արվեստի ոգեշունչ գործեր: Երաժշտությունն ավելի գրավիչ դարձրեցին առաջնակարգ երաժիշտների մասնագիտական ու արտահայտիչ կատարումները:

Ներածական խոսքով հանդես եկավ ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության թեկնածու, ԵՊԿ պրոֆեսոր, երաժշտագետ **Արաքսի Սարյանը**:

Կամերային սիմֆոնիան լարայինների համար, Արամ Խաչատրյանի հիշատակին, արժանի սկիզբ էր համերգի համար: Հուզական, բայց միեւնույն ժամանակ զուսպ ու խոհուն երաժշտական կերպարները համոզիչ ու ազդեցիկ էին Հայաստանի Պետական Կամերային նվագախմբի կատարմամբ, դիրիժոր, ՀՀ վաստակավոր արտիստ՝ Վիկտոր Խաչատրյանի ղեկավարությամբ:

Կլառնետի եւ դաշնամուրի Սոնատը, որ ճանաչում է ստացել նաեւ արտասահմանում, փայլուն կատարեցին Միեր Մնացականյանն (կլառ-



նետ) ու Հովհաննես Մանուկյանը (դաշնամուր):

**Ներսես արք. Պոզապալյանի** խոսքերով «Սուրբ հոգի» վոկալ շարքը հնչեցրին միջազգային մրցույթների դափնեկիրներ՝ Արծվիկ Դեմուրճյանը (սոպրանո) եւ Լեւոն Ջավադյանը (դաշնամուր). երգչուհու ադամանդային հստակ ձայնը, նվագակցության նրբին հարմոնիաների ֆոնի վրա յուրօրինակ կերպով վերարտադրեցին հոգեւոր թեմատիկան՝ եթերայնություն, կարծես երկնքին մոտ լինելու զգացողություն արթնացնելով:

Պարույր Սեւակի խոսքերով ռոմանսների շարքը՝ բանաստեղծական ու երաժշտական համահունչ կերպարներով, զգացմունքների նրբերանգների փոփոխականությամբ, հրաշալի մեկնաբանում ստացան միջազգային մրցույթների դափնեկիր, ՀՀ վաստակավոր արտիստ Աննա Մայիլյանի (մեցցո սոպրանո) եւ Էլեն Կիրակոսյանի (դաշնամուր) կատարմամբ:

Համերգը եզրափակեցին Գ. Չթչյանի սքանչելի խմբերգերը՝ a cappella երգչախմբի 2010-ին ստեղծված Երկու խմբերգը Եղիշե Չարենցի խոսքերով, որ կատարվեց առաջին անգամ, եւ Երեք աղոթքը Մուշեղ Իշխանի խոսքերով: Լույսը, հավատը, խաղաղությունը փառաբանող, անսահման գեղեցիկ երաժշտական լեզվով այս երկերը կատարյալ հնչողություն ստացան Հայաստանի պետական կամերային երգչախմբի կատարմամբ, գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռոբերտ Մլքեյանի ղեկավարությամբ:

Համերգը ոգեւորության մեծ ալիք ստեղծեց բազմաթիվ անվանի երաժիշտների եւ երաժշտասերների մոտ: Նրանցից շատերը հիացական կարծիքներ արտահայտեցին:

«Հիացած եմ՝ սկսած Սիմֆոնիայից կամերային նվագախմբի համար, վերջացրած երգչախմբով: Հիացած եմ միջազգային ճանաչում ստացած երգչուհիներով: Հիացած եմ կլառնետի Սոնատով եւ կլառնետահարով». այսպիսին էր ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, հայ մեծ կոմպոզիտոր **Էդվարդ Միրզոյանի** տպավորությունը:

Համերգի կազմակերպվել էր ՀՀ Մշակույթի նախարարության եւ ՀՀ Կոմպոզիտորների միության աջակցությամբ: Ինչպես նշեց Գ. Չթչյանն իր շնորհակալական խոսքում՝ «համերգը կայացավ դժվարությամբ, սակայն հենց այդ դժվարության շնորհիվ ես հասկացա, որ մեզանում դեռ կան շատ բարի, արտացավ, հասկացող մարդիկ: Ես խոնարհվում եմ նրանց առջեւ»:

Խոնարհվում ենք կոմպոզիտորի եւ նրա արվեստի առջեւ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՅԱՆ
երաժշտագետ, «Երաժիշտ» ամսաթերթի գլխավոր խմբագիր

## Ինտերնետային լրատվության մարտահրավերները պահանջում են նոր մոտեցումներ

Մոտ մեկ ամիս առաջ Ստեփանակերտում տեղի ունեցավ Լրագրողների համահայկական հինգերորդ համաժողովը: Իր արդյունավետությամբ այն աչքի ընկավ թե՛ քանակի եւ թե՛ որակի տեսանկյունից: Այս անգամ համաժողովին մասնակցում էին 200 լրագրողներ եւ խմբագիրներ՝ 100-ը Սփյուռքից եւ 100-ը Հայաստանից: Այն օգտակար էր երկու տեսանկյունից: Առաջին՝ այն վեր հանեց խնդիրներ, որոնք լուրջ մարտահրավեր են ներկայացնում հայ տեղեկատվության ներկա ժամանակում: Երկրորդ՝ Հայաստանում, Արցախում եւ արտերկրում գտնվող հայ լրագրողներն ու խմբագիրները հրաշալի առիթ ունեցան իրար հետ շփվելու, միմյանց հետ ծանոթանալու եւ անձնական հարաբերություններ հաստատելու: Մի բան, առանց որի դժվար է համագործակցել, երբ մարդուն չես ճանաչում եւ չգիտես, թե ինչ անձ է e-mail-ի կամ հեռախոսի հակառակ կողմում:

Նաեւ այս տեսանկյունից սփյուռքի նախարարության այս նախաձեռնությունը հերթական ողջունելի քայլն էր՝ իրականացված հայաստանյան իշխանությունների կողմից: Նախորդը, որ դարձյալ շատ բարձր եմ գնահատում, ՀՀ նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի եւ տեղեկատվության» կենտրոնի ստեղծումն էր, որի աշխատանքի արդյունավետությանը վկա եմ եղել անձնական փորձով: Հայաստանին եւ տարածաշրջանին վերաբերող լրատվության ստացման եւ ապահովման ուղղությամբ աշխատանքների ժամանակ այս թիմի պրոֆեսիոնալիզմն ու նվիրումը մեծ օգնություն եղան մեզ համար՝ որպես սփյուռքահայ մամուլի: Հետեւաբար, վերոհիշյալ երկու նախաձեռնությունները, մեկը մեկին լրացնելով, կարող են շատ օգտակար լինել թե՛ տեղական եւ թե՛ սփյուռքահայ մամուլի համար, եթե կապն օգտագործվի արդյունավետորեն:

Քանի որ ժամանակակից ընթերցողը թերթային մտածողությունից տեղափոխվում է դեպի ինտերնետային ընթերցանություն, սա լուրջ մարտահրավեր է մեր համահայկական լրատվությանը՝ հետեւելու այս տեսակ մտածողության փոփոխությանը: Վերջերս Facebook սոցիալական ցանցն օգտագործողների թիվն անցավ 500 միլիոնը, իսկ Twitter-ն այս տարվա ապրիլի 10-ի տվյալներով արդեն ուներ 100 միլիոն օգտագործող ամբողջ աշխարհում: Ահա՛, թե որտեղ են այսօրվա ընթերցողները: Նրանք սոցիալական ցանցերում ու որոնման համակարգերի (Google, Bing, Ask, AOL, Yandex, Rambler, Baidu) լրատվական բաժիններում են: Հետեւաբար, ժամանակն է, որ համահայկական լրատվությունը թերթային մտածողությանը զուգահեռ նաեւ արագ քայլեր կատարի՝ իր ամուր դիրքերն ունենալու համացանցում:

Պարզապես ինտերնետային կայք ունենալը դեռ ոչինչ չի նշանակում: Այսօր հայկական գրեթե բոլոր թերթերն ունեն իրենց կայքէջերը: Սփյուռքում ոչ բոլոր թերթերն ու պարբերականներն ունեն կայքէջեր, բայց նույնիսկ նրանց համար, ովքեր ունեն, այդ փաստը շատ քիչ է հաջողության հասնելու համար: Լուրը պարզապես կայքէջում տեղադրելը դեռ չի նշանակում, թե այն հասու է դառնում օտար կամ թեկուզ հենց հայ ընթերցողին: Յուրաքանչյուր լրատվամիջոց պետք է հստակ մարտավարություն ունենա համացանցում ընթերցողին հասնելու համար: Հասանելի լինելով ինտերնետային լայն մասսաների՝ մեր մամուլը կարող է ոչ միայն իր ուրույն տեղն ունենալ համաշխարհային լրատվության ոլորտում, այլ նաեւ եկամտաբերություն ապահովել՝ դառնալով ավելի զորեղ: Ահավասիկ կոնկրետ քայլերի նախագիծ՝ այդ նպատակին հասնելու համար:

1. Ունեցեք վեբ-կայք

Ցանկալի է, որ կայքն ունենա բաժիններ այլ լեզուներով նույնպես, քանի որ ընթերցողների լայն մասսաներ կարդում են այլ լեզուներով: Նպատակն է՝ այդ լեզուներով ընթերցողների մոտ ստեղծել հասարակական կարծիք հայերի մասին եւ եկամուտներ ապահովել, որոնց միջոցները կօգնեն իրականացնել ձեր համահայկական եւ մամուլի հզորացման ծրագրերը:

2. Ուսումնասիրեք Google News եւ Bing News համակարգերը ձեր լեզուներով. Հայերեն չկա, բայց կա գրեթե բոլոր լեզուներով: Գրանցվեք Google.com/news եւ Bing.com/news համակարգերում՝ ձեր կայքերը մուտքագրելով այնտեղ: Շատ կարեւոր է, որ դուք մանրակրկիտ ձեւով հետեւեք նրանց կանոններին, որպեսզի իրենք ընդունեն ձեր մամուլը՝ իրենց որոնող համակարգում: Սա ձեզ ավելի շատ ընթերցող կբերի եւ հետեւաբար՝ եկամուտ:

3. Դիմեք Google Adsense գովազդային ծրագրին, որը ձեզ կօգնի եկամտաբեր դարձնել ձեր թերթը, ռադիոն, TV-կայքը եւ մամուլը՝ www.google.com/adsense :

4. Ուսումնասիրեք նաեւ այլ գովազդային ծրագրեր եւ տեսեք, թե դրանք ինչպես կարող են ավելացնել ձեր եկամուտները, օրինակ՝ Vibrant Media, Kontera, Tribalfusion, Valueclick, Yandex Direct, Begun :

5. Օգտագործեք Google Analytics www.google.com/analytics ՝ ամբողջական ինֆորմացիա ստանալու համար, թե որական քանի մարդ է կարդում ձեր կայքը, որտեղից են կարդում, որքան ժամանակ են անցկացնում այնտեղ եւ թե ինչպես են ձեզ գտել:

6. Ինտերնետից մի բացակայեք ոչ մի օր, տպագրվեք ամեն օր: Եթե կայք ունեք եւ ամեն օր չեք գրում գոնե մեկ լուր ձեր կայքում, ապա դա ձեզ համար վատ է. մարդիկ հիասթափվում են, երբ նորություն չեն տեսնում եւ այլեւս չեն վերադառնում: Նույնը եւ՝ որոնման համակարգերը:

7. Ագրեսիվորեն օգտագործեք Twitter, Facebook, Digg, Reddit, Stumbleupon՝ տարածելու համար ձեր լուրերը: Տեսեք, թե ինչպես են մեծ թերթերը, օրինակ, Huffington Post-ն օգտագործում Twitter եւ Facebook. շատ հաջողված օրինակ է: Նրանք իրենց էջերում ամենուր դնում են Twitter-ի, Facebook-ի եւ այլ սոցիալական ցանցերի լոգոները:

8. Բոլոր այս կետերն անվճար են եւ ոչ մի ծախս չեն պահանջում, այլ ավելացնում են ձեր եկամուտները եւ մեծացնում ձեր լուրերի տարածման շրջանակը:

ԱՐՍԵՆ ՀԱՐԵՅԱՆ
http://www.huliq.com

# Անդրեասյանը խաղաղասիրաբար է տրամադրված

Սանկտ Պետերբուրգում ավարտին է մոտենում Միխայիլ Չիգորինի շախմատի հուշամրցաշարը: Ավարտական տուրից առաջ մրցաշարի հայաստանցի 8 շախմատիստներից լավագույն արդյունքն ունի Զավեն Անդրեասյանը, որը 5,5 միավորով 19-րդ տեղում է: Զավենն առայժմ անպարտելի է, միեւնույն ժամանակ արդեն 5 տուր չի կարողանում ճաշակել հաղթանակի քաղցրությունը: 8-րդ տուրում նա 5-րդ անընդմեջ ոչ-ոքին գրանցեց իր օգտին` սպիտակներով հաշտություն կնքելով ռուսաստանցի գրոսմայստեր Վադիմ Զվյագինցեւի հետ:



5-ական միավոր են վաստակել Կարեն Գրիգորյանը, Հրանտ Մելքումյանն ու Դավիթ Պետրոսյանը: 8-րդ տուրում այս եռյակից միավոր վաստակեց միայն Դավիթ Պետրոսյանը` ոչ-ոքի ավարտելով պարտիան ռուսաստանցի Դմիտրի Կուլուկինի հետ: Իսկ ահա Գրիգորյանն ու Մելքումյանը պարտություններ կրեցին համապատասխանաբար Վլադիմիր Բուրմակինից եւ Յակով Գելլերից:

4 անընդմեջ հաղթանակներից հետո Աղասի Ինանցի հաղթարշավը կասեցրեց ռուսաստանցի Յարոսլավ Ուլկոն` պարտիան ավարտելով ոչ-ոքի: Ինանցը վաստակել է 4,5 միավոր: 4-ական միավոր ունեն Վլադիմիր եւ Սուրեն Պողոսյանները: Վլադիմիրը հաղթեց ռուսաստանցի Արինա Կիսելյովային, իսկ Սուրենը պարտվեց Անդրեյ Ստուկոպինին:

Վերջապես հաղթանակի բերկրանքը վայելեց Վիկտորիա Բաղդասարյանը` սեւերով առավելության հասնելով Ալեքսեյ Մուխայի նկատմամբ: Վիկտորիան ունի 2 միավոր:

Աղյուսակը 7 միավորով շարունակում է գլխավորել ադրբեջանցի Էլթաջ Սաֆարլին: Նա սեւերով ոչ-ոքի խաղաց Դմիտրի Անդրեյկինի հետ: Վերջինս Իվան Սոկոլովի, Ալեքսանդր Արեշչենկոյի, Կոնստանտին Սակաեւի, Վլադիմիր Ֆեդոսեեւի, Ալեքսեյ Դրեեւի հետ 6,5 միավորով հետապնդում է առաջատարին: Սոկոլով-Սակաեւ պարտիան ավարտվեց ոչ-ոքի: Դրեեւը եւս հաշտություն կնքեց Սերգեյ Ժիգալկոյի հետ: Արեշչենկոն հաղթեց Ամոնատովին, Ֆեդոսեեւը պարտության մատնեց Պոնկրատովին:

# Հինգ թիմեր արդեն լուծել են ուղեգրերի հարցը



Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի 4-րդ տուրից հետո 5 թիմեր` բելառուսական ԲԱՏԷ-ն, ռուսական ԲԿՄԱ-ն ու «Զենիթը», գերմանական «Շտուտգարտն» ու պորտուգալական «Պորտոն» ժամկետից շուտ նվաճեցին 1/16 եզրափակիչի ուղեգրերը:

Մրցաշարում պարզապես հիանալի են խաղում Մոսկվայի ԲԿՄԱ-ն ու Սանկտ Պետերբուրգի «Զենիթը»: Ռուսական թիմերը 4-րդ անընդմեջ հաղթանակները տոնեցին: «Զենիթը» նույնիսկ ոչ հիմնական կազմով Սպլիտում 3-2 հաշվով պարտության մատնեց տեղի «Հայդուկին»: Արդեն 51-րդ րոպեին «Զենիթը» վճռել էր հանդիպման ելքը` 3 անգամ գրավելով մրցակցի դարպասը: Աչքի էին ընկել Իոնովը, Խուսեյնը (11 մ) եւ Ռոզինան: Դաշտի տերերին հետագայում հաջողվեց միայն կրճատել հաշվի տարբերությունը:

ԲԿՄԱ-ն սեփական հարկի տակ 3-1 հաշվով հաղթեց իտալական «Պալերմոյին»: Թեեւ արդեն 10-րդ րոպեին Մակարոնեն առաջ մղեց հյուրերին, սակայն հետագայում Հոնդան եւ երկու անգամ Նեցիդը գրավեցին իտալացիների դարպասը:

E խմբում ԲԱՏԷ-ն լուծեց հաջորդ փուլ դուրս գալու խնդիրը` 3-1 հաշվով պարտության մատնելով Տիրասպոլի «Շերիֆին»: Նույն խմբում Կիեւի «Դինամոն» սեփական հարկի տակ 2-0 հաշվով պարտության մատնեց հոլանդական «Ալկմարին»: Դինամոյականները վաստակեցին 7 միավոր եւ լավ հնարավորություն ստացան պայքարելու խմբում 2-րդ ուղեգիրը նվաճելու համար: «Ալկմարն» ու «Շերիֆը» վաստակել են 3-ական միավոր:

«Շտուտգարտը» հյուրընկալվելիս 3-0 հաշվով ջախջախեց իսպանական «Խետաֆեին»` տոնելով 4-րդ անընդմեջ հաղթանակը: Նույն խմբում «Օդենսեն» 2-0 հաշվով հաղթեց «Յանգ Բոյզին»: Վերջինս ունի 6 միավոր, իսկ «Խետաֆեն» ու «Օդենսեն» վաստակել են 3-ական միավոր:

«Պորտոյին» սեփական հարկի տակ «Բեշիքթաշի» հետ ոչ-ոքի արդյունքը (1-1) բավարար էր հաջորդ փուլի ուղեգիր նվաճելու համար: «Պորտոն» ունի 10 միավոր, «Բեշիքթաշը»` 7: Սոֆիայի ԲԿՄԱ-ն 2-1 հաշվով հաղթելով Վիեննայի «Ռապիդին», վաստակեց 3 միավոր ու հավասարվեց ավստրիական թիմին:

Ուղեգիր նվաճելուն մոտ է հոլանդական «Էյնդհովենը», որը I խմբում10 միավորով առաջատարն է: Հոլանդացիները սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթեցին հունգարական «Դեբրեցենին»: Նույն խմբում «Սամպդորիայի» եւ Խարկովի «Մետալիստի» մրցավեճում դարպասները մնացին անառիկ: Ուղեգրերի համար պայքարում բարձր են նաեւ «Սեւիլիայի» ու «Սպորտինգի» հնարավորությունները: «Սեւիլիան» J խմբում 4-0 հաշվով ջախջախեց Լվովի «Կարպատներին» եւ 9 միավորով գլխավորում է աղյուսակը: C խմբում «Սպորտինգը» եւս 9 միավորով առաջատարն է: Պորտուգալական ակումբը թեեւ Բելգիայում 1-3 հաշվով զիջեց «Գենտին», սակայն առաջատարի դիրքը պահպանեց:

Ահա 4-րդ տուրում կայացած մյուս հանդիպումների արդյունքները. «Յուվենտուս»-«Զալցբուրգ»` 0-0, «Լեխ»-«Մանչեսթր Սիթի»` 3-1, «Բայեր»-«Արիս»` 1-0, «Ռուսենբորգ»-«Ասլետիկո»` 1-2, «Լեւսկի»-«Լիլ»` 2-2, «Բրյուգե»-«Դինամո» (Զագրեբ)` 0-2, ՊԱՕԿ-«Վիլյառեալ»` 1-0, «Լոզան»-«Սպարտա»` 1-3, ԱԵԿ-«Անդերլեխտ»` 1-1, ՊՍԺ-«Բորուսիա» (Դորտմունդ)` 0-0, «Լիվերպուլ»-«Նապոլի»` 3-1, «Ստյաուա»-«Ուտրեխտ»` 3-1:

# Պակյաո-Մարգարիտո մենամարտը հավանաբար ռեկորդային դառնա

Նոյեմբերի 13-ի ԱՄՆ-ի Առլինգթոն քաղաքում կայանալիք Մենի Պակյաո-Անտոնիո Մարգարիտո բռնցքամարտի մենամարտը տոմսերի վաճառքի առումով գուցե ռեկորդային դառնա: Այդ մենամարտը կայանալու է 100 հազար հանդիսականի համար նախատեսված «Cowboys Stadium» ծածկած մարզադաշտում: Օրերս կայացած մամուլի ասուլիսում մենամարտի կազմակերպիչ Բոբ Արումը հայտնել է, որ տոմսերը շատ արագ են սպառվում: Նրա կարծիքով, հնարավոր կլինի ավելի քան 60 հազար տոմս վաճառել: Նշենք, որ Պակյաոյի նախորդ մենամարտը Ջոշուա Կլոտիի հետ կայացել էր այս տարվա մարտին նույն մարզադաշտում եւ վաճառվել էր 50994 տոմս: Դա ծածկած մարզադաշտերում անցկացված մենամարտերի մեջ վաճառված տոմսերի քանակով 3-րդ ցուցանիշն է:

Տեղեկացնենք, որ ծածկած մարզադաշտերում անցկացված մենամարտերից հանդիսականների քանակով ռեկորդայինը 1978-ին Մոհամմեդ Ալու եւ Լեոն Սպինքսի մրցավեճն էր: Այդ մենամարտը դիտել էր 63315 հանդիսական: Իսկ բաց մրցապարեզներում անցկացված մենամարտերից հանդիսականների քանակով ռեկորդը պատկանում է 1993-ին Մեխիկոյում կայացած Խուլիո Սեզար Չավես-Գրեգ Հոգեն մրցամարտին: Այդ մենամարտին ներկա է գտնվել ավելի քան 136 հազար հանդիսատես:

ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

# Աշոտ Դանիելյանը սամբոյի աշխարհի չեմպիոն

Տաշքենդում մեկնարկած սամբոյի աշխարհի առաջնությունում գերազանց ելույթ ունեցավ սամբոյի եւ ձյուդոյի օլիմպիական մարզադպրոցի ԼՂՀ մասնաճյուղի սան, 74 կգ քաշային Աշոտ Դանիելյանը: Հաղթելով բոլոր մրցակիցներին, հայ սամբիստը նվաճեց մարզական սամբոյի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Հիշեցնենք, որ ստեփանակերտցի մարզիկը գարնանը Մինսկում նվաճել էր մարտական սամբոյի Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը:

Ռուզաննա Սարգսյանը (48 կգ), Տիգրան Կիրակոսյանը (52 կգ) եւ Արտակ Ծատինյանը (90 կգ) մրցաշարում գրավեցին 5-րդ տեղը: Վաղը կկայանան մարտական սամբոյի աշխարհի առաջնության գոտեմարտերը: Տաշքենդում ընդհանուր առմամբ աշխարհի առաջնության մրցանակներն են վիճարկում 30 երկրների մոտ 300 սամբիստներ:

# Արոնյանը հաղթանակով մեկնարկեց

Լեւոն Արոնյանը հաղթանակով մեկնարկեց երեկ Մոսկվայում սկսված շախմատի Միխայիլ Տալի հուշամրցաշարում: Մեկնարկային տուրում նա 41-րդ քայլին հաղթեց ռուսաստանցի Վլադիմիր Կրամնիկին: Մեկնարկային տուրը բավական արդյունավետ էր: 5 պարտիաներից միայն մեկում գրանցվեց ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Մամեդյարովն ու Նակամուրան: Գրիշչուկը հաղթեց Էլյանովին, Վան Հաոն պարտության մատնեց Շիրովին, Կարյակինն առավելության հասավ Գելֆանդի նկատմամբ:

# Նալբանդյանը մտավ հաջորդ փուլ

Բազելում ընթացող թենիսի մրցաշարում հաջող է հանդես գալիս Դավիթ Նալբանդյանը: Առաջին փուլում նա հաղթեց չեխ Յան Հայեկին (6-3, 6-4), իսկ 2-րդ մրցախաղում առավելության հասավ խորվաթ Մարին Չիլիչի նկատմամբ (4-6, 6-4, 6-4):

Քառորդ եզրափակիչի ուղեգիր է նվաճել նաեւ Ռոջեր Ֆեդերերը, որը 6-3, 6-4 հաշվով հաղթեց սերբ Յանկո Տիպսարեւիչին: Պայքարը շարունակում են նաեւ Ռադեկ Շտեպանեկը, Էնդի Ռոդիկը, Ռիշար Գասկեն, Ռոբին Խասեն եւ Նովակ Ջոկովիչը:

# Հայաստանը ներկայացված չէ

Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան հրապարակել է աշխարհի ուժեղագույն 350 ակումբների դասակարգման հերթական ցուցակը: Արդեն 2-րդ ամիսն է, այդ ցանկում բացակայում են հայկական ակումբները: Նախկինում պարբերաբար այդ ցանկում ընդգրկվում էին «Փյունիկը», «Բանանցը» եւ «Միկան»:

Դասակարգման հերթական ցուցակը հաշվի է առնում թիմերի ցուցանիշներն ինչպես ազգային առաջնություններում, այնպես էլ միջազգային մրցասպարեզներում 2009-ի նոյեմբերի 1-ից մինչեւ 2010-ի հոկտեմբերի 31-ը: Ինչպես նախորդ ամսում, այս անգամ էլ ցուցակը գլխավորում է չեմպիոնների ներկայիս գավաթակիր Միլանի «Ինտերը»: 2-4-րդ տեղերը զբաղեցրած թիմերը` «Բարսելոնը», «Բավարիան» եւ «Չելսին» նույնպես պահպանել են դիրքերը: 6-րդ հորիզոնականից 5-րդ տեղ է տեղափոխվել «Լիվերպուլը»: Լավագույն տասնյակում են նաեւ Մադրիդի «Ատլետիկոն», արգենտինական «Էստուդիանտեսը», Մադրիդի «Ռեալը», բելգիական «Անդերլեխտն» ու բրազիլական «Ինտերնացիոնալը»:

Ֆուտբոլի պատմության եւ վիճակագրության միջազգային ֆեդերացիան ուժեղագույն ակումբների դասակարգման ցուցակը կազմում է 1991-ից: Այդ ժամանակից սկսած առավել հաճախ` 37 անգամ ուժեղագույնների ցանկը գլխավորել է «Միլանը»: 33 անգամ լավագույնն է ճանաչվել «Մանչեսթր Յունայթեդը»: 3-րդ տեղում իսպանական «Բարսելոնն» է, որը 30 անգամ է գլխավորել ուժեղագույնների ցանկը: 19-ական անգամ նման բախտի են արժանացել «Լիվերպուլն» ու «Ինտերը», 17 անգամ` «Սեւիլիան», 16-ական անգամ` «Յուվենտուսն» ու Մադրիդի «Ռեալը»: Ընդհանուր առմամբ դասակարգման ցուցակը գլխավորելու պատիվն ունեցել են 23 ակումբներ:

# Բյելսան հրաժարական տվեց

Այն բանից հետո, երբ Չիլիի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահի ընտրություններում հաղթեց իսպանացի գործարար Խորխե Սեգովիան, երկրի ազգային հավաքականի գլխավոր մարզիչ Մարսելո Բյելսան հրաժարական տվեց: Արգենտինացի մասնագետը նախապես հայտարարել էր, որ եթե Սեգովիան ընտրվի, ինքը հեռանալու է հավաքականից:

Այժմ Չիլիի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնի հիմնական հավակնորդը Մադրիդի «Ռեալի» նախկին մարզիչ Մանուել Պելեգրինին է:

# Զիդանն ու Մատերացին հաշտվեցին



Բոլորի հիշողության մեջ դեռ թարմ է ֆուտբոլի աշխարհի 2006-ի առաջնության եզրափակիչ հանդիպման ժամանակ Զինեդին Զիդանի եւ Մարկո Մատերացիի միջեւ տեղի ունեցած տհաճ միջադեպը: Զիդանը գլխով հարվածել էր իրեն վիրավորած Մատերացիին, որի համար մրցավարը նրան հեռացրել էր դաշտից: Ի դեպ, այդ հանդիպումը Զիդանի համար վերջինն էր ֆուտբոլային իր հարուստ կարիերայում:

Եվ ահա, ինչպես երեւում է, երկու անվանի ֆուտբոլիստները վերջապես հաշտվել են: Նրանց հանդիպումը տեղի է ունեցել Միլանի «Melia Milano» հյուրանոցում, որտեղ իջեւանել էր Զինեդին Զիդանը, որը Միլան էր ժամանել «Ռեալի» հետ չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի հանդիպմանը: Հիշեցնենք, որ Զիդանը Ժոզե Մոուրինյոյի խորհրդականն է: Եվ ահա հյուրանոցում հանդիպելով Մատերացիին, Զիդանը ջերմ զրույցի է բռնվել նրա հետ, իսկ վերջում ի նշան հաշտության, նրանք գրկախառնվել են:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Orange-ն ամփոփում է մեկ տարվա գործունեության արդյունքները

Լրացավ Հայաստանում Orange-ի կողմից ծառայությունների մեկնարկի առաջին տարին, որն ընկերության համար լավ առիթ դարձավ՝ ամփոփելու մեկ տարվա արդյունքները:

Մեկ տարի հայաստանյան շուկայում գործելուց հետո Orange-ն այսօր ունի ձայնային ծառայությունների 300,000 եւ լայնաշերտ շարժական ինտերնետի 45,000 բաժանորդ: Ընկերության՝ ամենաարդիական տեխնոլոգիաներով համալրված 3G+ ցանցն այսօր ծածկում է բնակչության 93%-ը եւ ամենաընդարձակն է երկրում: Մեկ տարի առաջ իր տված խոստմանը համաձայն՝ Orange-ն առաջարկում է ծառայությունների լայն ընտրություն եւ առաջարկ ունի ինչպես զանգվածային շուկայի, այնպես էլ բիզնեսի համար: Orange-ը հեղափոխեց ինտերնետի շուկան՝ շարժական լայնաշերտ ինտերնետը դարձնելով մատչելի լայն հանրությանը ինչպես ֆիզիկապես, այնպես էլ գնային առումով:

Մեկ տարվա ընթացքում Orange-ը բազմաթիվ նորարարությունների հեղինակը դարձավ Հայաստանում՝ ինտերնետ մինչեւ 14.4 Մբիթ/վ ներբեռնման արագությամբ, բարձր հստակության HD ձայն, Ինտերնետ խանութ եւ այլն, ինչպես նաեւ վերափոխեց սմարթֆոնների շուկան՝ նշանակալիորեն խթանելով սմարթֆոնների եւ վերջիններիս միջոցով առաջարկվող ծառայությունների նկատմամբ հանրային հետաքրքրությունը: Այսօր Orange-ի խանութներում կարելի է գտնել հեռախոսների եւ սմարթֆոնների ամենալայն պորտֆոլիոն՝ շնորհիվ համաշխարհային առաջատար բրենդների հետ ուղիղ համագործակցության: Առաջին տարեդարձից մեկ օր առաջ Orange-ը հաստատեց իր առաջատարի դիրքը նորարարության դաշտում՝ հանրային կենդանի ցուցադրությամբ ներկայացնելով ապագայի՝ 4-րդ սերնդի տեխնոլոգիաները, իսկ դրանից երկու շաբաթ առաջ՝ Orange Expo-ում Ֆրանս Տելեկոմի տեխնոկենտրոնի հետ համատեղ ներկայացնելով հեռահաղորդակցության ամենատպավորիչ նորարարությունները:

Ցանկանալով լինել իր բաժանորդներին մոտ՝ Orange-ը կառուցել է վաճառքի լայն ցանց՝ 57 խանութ, որոնց թիվն օրեցօր մեծանում է, ավելի քան 2000 վաճառքի կետեր, որտեղ կարելի է ձեռք բերել SIM քարտ եւ ավելի քան 6000 վճարման կետ:

«Հայաստանում մեր հաջողությունները հնարավոր են դարձել մեր տաղանդավոր թիմի շնորհիվ, որի խանդավառության եւ միասնական ջանքերի շնորհիվ ենք կարողանում կյանքի կոչել մեր ծրագրերը: Այսօր 650 հոգի աշխատում է Հայաստանում Orange-ի կայացման համար, որոնց միավորում են Orange-ի արժեքները եւ միմյանց ու բաժանորդների նկատմամբ հոգատարության ներքին պարտավորությունը», ասաց Orange-ի գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան**:

Որպես հաղորդակցության ընկերություն՝ Orange-ն իր բիզնես գործունեությանը զուգահեռ նպատակ ունի հաղորդակցությունը դարձնել բոլորի համար՝ հատկապես նրանց, ովքեր սահմանափակ հնարավորություններ ունեն: Այդ փիլիսոփայությամբ է Orange-ն իր բարեգործական ծրագրի առանցքում դրել Հայաստանի հեռավոր համայնքների զարգացումը, երեխաների կրթական, մշակութային դաստիարակությունը եւ հատկապես աուտիզմով տառապող երեխաներին աջակցությունը:

## Orange-ի մասին

Ֆրանս Տելեկոմ Խմբի անդամ Orange Armenia-ն Հայաստանում շարժական հեռախոսակապի եւ ինտերնետի ծառայություններ է մատուցում 2009թ. նոյեմբերի 5-ից: Ընկերությունը Հայաստանում 2009թ. կատարել է 140 մլն եվրոյի ներդրումներ, իսկ մինչեւ 2010թ. վերջ կիրականացնի եւս 50 մլն դոլարի ներդրում եւ արդեն ապահովում է բջջային հեռախոսակապի ու լայնաշերտ շարժական ինտերնետի հասանելիությունը Հայաստանի մոտ 600 քաղաքներում եւ գյուղերում: Orange-ի 3G+ ծածկույթն այսօր ամենաընդարձակն է Հայաստանում եւ ծածկում է բնակչության 93% տոկոսը:




Orange-ը Հայաստանում հանդես է գալիս որպես նորարար եւ անմիջական բրենդ, եւ իր գործունեության կարճ ժամանակահատվածում արդեն երկրում առաջնորդել է մի շարք նորարարություններ, ինչպես HD ձայնի ներդրումը, որով Հայաստանը դարձավ այս տեխնոլոգիային տիրապետող երկրորդ երկիրն աշխարհում, մինչեւ 14.4 Մբ/վ արագությամբ լայնաշերտ ինտերնետ եւ այլն, որոնք նպատակ ունեն համաշխարհային տեխնոլոգիական նվաճումները հասանելի դարձնել Հայաստանում բնակչության հնարավորինս մեծ մասին: Orange-ը Հայաստանում նաեւ խթանեց սմարթֆոնների շուկայի զարգացումը՝ առաջինը ներկայացնելով iPhone, Android համակարգով HTC սմարթֆոններ, եւ հատուկ առաջարկների շնորհիվ դրանք հասանելի դարձնելով մեծաթիվ սպառողների: Orange-ը վերջերս ներկայացրեց նաեւ BlackBerry լուծումը Հայաստանում:

Orange-ը եւ այս նյութում հիշատակված Orange-ի որեւէ ապրանքի կամ ծառայության անվանում Orange Brand Services Limited-ի ապրանքային նշանն է:

Հավելյալ տեղեկությունների համար՝ lilit.martirosyan@orange-ftgroup.am:

# Շնորհավոր 70-ամյակդ



**«Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբը ջերմորեն շնորհավորում է անկախ Հայաստանի երրորդ հանրապետության առաջին խորհրդարանի իր գործընկերոջը՝ թիվ 119-րդ ընտրատարածքի պատգամավոր Ռազմիկ Արշակի Պետրոսյանին ծննդյան օրվա կապակցությամբ:**

**Լեգենդար «Արարատ» ֆուտբոլային խաղացողին, ղարաբաղյան շարժման եւ մարտական գործողությունների ակտիվ մասնակցին, երկու հայկական պետությունների միավորված խորհրդարանի Պաշտպանության եւ ներքին գործերի մշտական հանձնաժողովի անդամին, պահեստազորի գնդապետին ցանկանում ենք ամուր առողջություն, հաջողություններ անձնական կյանքում եւ ղարաբաղյան երկարակեցություն:**

**Մաղթում ենք Ձեզ ջերմ սեր ընտանիքում եւ Ձեր վաստակի հավուր պատշաճի գնահատում:**

**Խորին հարգանքներով ընդ Ձեզ եւ Ձեր գործը՝**

***«Գերագույն խորհուրդ» պատգամավորական ակումբի նախագահություն***

ԱՅՐ ԵՎ ԿԻՆ

# Փնտրվում են հարուստ տղամարդիկ եւ համեստ կանայք

**Եթե դուք չգիտեք, թե ինչպես պետք է շփվել հակառակ սեռի ներկայացուցչի հետ, ամաչում եք արտահայտել ձեր մտքերը կամ տառապում եք թերարժեքության զգացումով ու չեք կարողանում կյանքի ընկեր գտնել, ձեզ կօգնեն ոչ միայն սեքսապաթոլոգ-հոգեբանները, այլեւ հատուկ միայնակ անձանց համար նախատեսված կենտրոնները:**

**Հոգեթերապեւտ Մարատ Ջաֆարյանի համոզմամբ՝ մեր հասարակությունը այնքան չի զարգացել, որ նման կենտրոններ այցելի, որովհետեւ չի հավատում, թե կգրանցվեն բարեհաջող ամուսնություններ, մինչդեռ նման կենտրոններ այցելողներն ավելի մեծ շանսեր ունեն իրենց երկրորդ կեսին գտնելու համար, քանի որ ընտրության հնարավորությունը հսկայական է:**

**7-ամյա կենսագրություն ունեցող «Հանդիպում» ընտանիքի եւ ամուսնության կենտրոն դիմողների թիվը շուրջ 4.000 է: Հիմնականում դիմում են կանայք, սակայն վերջին շրջանում տղամարդիկ նույնպես սկսել են օգտվել կենտրոնից: Կենտրոնի ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է վճարել 11.000 դրամ, սակայն, ըստ տնօրենի, դա անսահմանափակ հնարավորություն է տալիս հանդիպումներ ունենալու: Նարե Մարտոյանի փոխանցմամբ՝ եթե մի քանի տարի առաջ հայ աղջիկները նախընտրում էին օտարազգի ամուսին ունենալ եւ արտերկրում ապրել, ապա այսօր նրանք նախընտրում են հայաստանցի ամուսին ունենալ: Մինչդեռ Հայաստանում ապրած կամ այցելած օտարերկրյա տղամարդիկ նախընտրում են հայ կնոջ հետ ամուսնանալ:**

**Հայ աղջիկներին նախընտրում են հատկապես ֆրանսիացիներն ու գերմանացիները: Նրանք հայուհու մեջ գնահատում են նվիրվածությունը, բարությունը, քնքշությունն ու խոհանոցում աշխատելու վարպետությունը:**

**Հայ տղամարդիկ չեն ցանկանում, որ իրենց ապագա կինը լավ վաստակի, մինչդեռ հայ կանայք առաջնային տեղ են տալիս հենց բարեկեցիկ կյանքով ապրող տղամարդկանց:**

**Տղամարդկանց նախընտրությունների կապակցությամբ Ջաֆարյանն ու Մարտոյանը տարբեր մեկնաբանություններ տվեցին: Մարտոյանի ներկայացմամբ տղամարդիկ չեն նախընտրում կույս կանանց, մինչդեռ Ջաֆարյանին դիմած բոլոր տղամարդիկ առաջնային են համարել հենց այդ փաստը: Ջաֆարյանը շատ տգեղ համեմատություն կատարեց՝ կնոջը նմանեցնելով մեքենայի՝ հավելելով, որ հայ տղամարդիկ նախընտրում են խանութից նոր մեքենա գնել, քան ուրիշի վարած մեքենան քշել:**

**Նրա մեկնաբանությամբ՝ հայ տղամարդիկ նախընտրում են, որ կնոջ կյանքում առաջին տղամարդը լինեն, իսկ կանայք նախընտրում են, որ իրենց կողքի տղամարդը լինի ոչ թե առաջինը, այլ վերջինը՝ եւ իրեն չլքի:**

Հ. Հ.

## Հայտարարություն

Սույն թվականի նոյեմբերի 10-ին, ժամը 12:00–ին ՀՀ ք. Դիլիջանում տեղի կունենա, Պարզ լճի փողոցին հարակից տարածքում նախատեսվող հանգստի գոտու աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

www. azg.am

ՆՓԱԿ
www.accea.info
ՆՈՐԱՐԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ
*Ներկայացնում է*

նոյեմբեր 8 - 15, 2010, ժամը 18:00-ից 20:00
**ՄԵԿ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ**
**թատերական V փառատոն**
**ՄՐՑՈՒՅԹՈՒՄ՝** *13 բեմադրություններ. Շ. Սիլվեսթեյնի, Ա. Չեխովի, Ա. Իսահակյանի, Է.Շմիթի, Լ. Տոլստոյի, Ս. դե Բովուարի, Վ. Սարոյանի գործերի հիման վրա:*
**ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳԻՐ՝** *3 փոքրածավալ թատերախաղեր Ֆրանսիայից, Լեհաստանից եւ Հայաստանից:*

նոյեմբեր 16, 2010 - մարտ 12, 2011
**ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ**
ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
*... Քաղաքացիական արդարությունը ոչ թե բողոքելու եւ պահանջելու, այլ լսված լինելու հնարավորությունն է, որտեղ հավանական է պահանջատերի եւ այդ պահանջը բավարարողի արդյունավետ հարաբերությունը...*
Համադրող **ՍԵԴԱ ՇԵԿՈՅԱՆ**

**ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է**
Այցելություն ամեն օր բացի կիրակի եւ երկուշաբթի, ժամը 11:00-17:00
**Փավստոս Բյուզանդի 1/3 (Վերնիսաժի հարավ) հեռ. 568225**

Ռիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<Ավանգարդ Ինվեստ>> ՈւՎԿ ՓԲԸ -ին սեփականության իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակարան, ընդ. մակերեսը 47.3 ք.մ.: Հասցե՝ ք. Երեւան, Էրեբունի վարչական շրջ., Տիգրան Մեծի նրբ., 5 շենք, բն. 15: Մեկն. գինը՝ 13000000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 06.12.2010թ-ից մինչ 01.03.2011թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00 – 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու եւ այն անվճար ստանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am** :

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 3.11.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: